

ՀԱՆԴԷՍ ՀԱՅԿԱԿԱՆ

Գ. Լ. ՄԱՐԳՈՎՑԵՎԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏՊԱԽՈՐՈՒԹԵԱՆՅ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՅԱՅՐԱՐԱՏ

Ե

Տելիփանի հովիտը, աշխարհիս մէջ
գեղանկար տեղերուն մին:

Երկրորդ օրը, 4 օգոստոս, մեկնեցանք Ուզունթալէ, վաղ առաւօտուն արեւը ելնելէն շատ առաջ: Աբանջելի առաւօտ մի էր, այլ կը խոտտանար նախորդին նման տաք օր: Բուն լեռանց մէջն էր ճամբանիս, այլ շէր ձեանար ծմակ. ընդարձակ էր տարածուած թիւնը, գեղեցիկ տեսարան բլուրներու և խորածորներու. հարուստ բուսականութիւնըն աստ և ոնդ կռանիտան հսկայից գլուխըն կը պսակէր: Լեռանց խորածորերէն հօս հօն ելած մէգերը շուտով կը ցրուէին առաւօտեան օդին մէջ:

Ամբողջ կուրծքով և թոքերուն լայնութեամբ կարելի էր առնուշ տալ նուրբ օդը. իբր թէ նախորդ օրը սաստիկ տաք եղած չըլլար, և կարծես նոյն ինքն արեւը, որ առաջի օր կ'էրէր կը մրկէր, այդ գեղեցիկ առաւօտեան և հիւսնալու գիւլերուան միջոց ինքն ևս զովացած էր:

ՊՐԱԿ Դ.

Ճանապարհին երկու կողմը բանջարտնոցներուն մէջ երբեմն երբեմն մարդիկ կ'երևնային, որ բանջարեղինաց տէրերն համ պահապաններն էին. ոմանք հանգարտ նստած գետինն վրայ, երբալով աղօթք կը մատուցանէին առ Ալլահ, որ աւելի ևս մեծնան սեխերը և ձմերուկները, իսկ այլք հրացան ուսերնին՝ կը դիտէին իրենց սեխետանները, և թէ որոնք կարելի է կըտրել ի վաճառ:

Քանի առաջ գնացինք՝ նեղցաւ հովիտը, մօտեցան լեռներն, թողլով մէջ տեղէն ճամբայ գեղեցիկ վտակին Աղստեու, որոյ եզերքը կ'աճէին հսկահասակ ծառեր: Շատ զմայելի էին այդ դարեւոր ծառերը: Քարուտ ճանապարհն անմիջապէս վտակիս և գերբին վրայ էր, որոց վրայ շուք կը տարածէին երբեմն ծառերն և երբեմն լեռանց քիւերն: Առաջ կ'երթայինք վայրենի՝ այլ չբնադագեղ ծործորին մէջ:

— Կեցիր, կանչեց Մորտուլածէ իւր կառավարին:

— Խնդրեմ կեցուցէք և ձեր կառքը, ասաց ինձ: Եւ ինքը հրացանինն ձեռքը՝ իջաւ կառքէն: Արդեօք աւազաններ կան,

մտածեցի, 'ի զուր զգուշացուցին զիս Տելի-
ժանու Հովտին Համար:

— Ի՛նչ պատահեցաւ, հարցուցի կառա-
վարիս:

— Նապաստակներ. և ահա հօն կը վազ-
վըզեն:

Նայեցայ, աւազակներու տեղ նապաս-
տակներ տեսայ: Ամբողջ ընտանիք նա-
պաստակներու, ճանապարհին մօտ՝ ժայ-
փի մը գարին վրայ կը խաղային:

Մորտուլածէ ձեռքը հրացանով կը մօ-
տենար, նոքա անտարբեր՝ իրենց խաղին
հետ էին: Այդ նշան էր որ այդ տեղեր գետ-
չէր հասած նենգաւոր քաղաքաւորութեան
ձեռքը, որ հնարած է դէնք և հրացան,
վասն զի նապաստակներն, հանգերձ իրենց
հանրածանօթ զգուշաւորութեամբ, չէին
վախեր նենգօտ մարդէն և հրացան գոր-
ծիքէն:

Արինահէզ վրացին մօտեցաւ և դէմ
տու գէմ՝ պարպեց հրացանիկը անմեղ ձա-
գերուն և նոցա մօր վրայ: Վրիպեցաւ.
նապաստակները խաղերը մէկ գի դրած,
տալած հայեցան օդոյն մէջ ցնդած մուխին,
հրացանիկը ձեռնի՝ անգութ վրացւոյն. այլ
փորձելով մտքերէն չէր անցնել: Երանելի՛
պարզմտութիւն:

— Տեսէք տեսէք, միմապ թաթար կա-
ռավարս, չփոթեցան նապաստակները,
չեն փախչիր:

Դարձեալ մուխը երեցու, ձայնը լսուե-
ցու. այլ դարձեալ վրիպակ:

Նապաստակներն կասկածիւով, սկսան
վեր վեր քաշուիլ:

Դարձեալ հարուած. գարձալ վրիպակ:

— Վայ թշուառութեանս, ի՛նչ ամօթ
բան:

— Շատ լաւ է՝ որ ամօթ եղաւ:

— Ես մեր զօրաբաժնին քով նշանածիդն
եմ:

— Նապաստակներուն բազդը բանեցաւ:

— Այ. անիծուած հրացանիկս կանգնա-
լափի դէպ 'ի յաջ կը նետէ:

— Պէտք էր որ դէպ 'ի ձախ կանգնա-
լափի նշան առնուիք:

— Երեւակայեցէք, թէ յիշափ օգուտ պի-
տի բերէր մեզ այդ հրացանիկն, եթէ ա-
ւազակներ վրանիս հասնէին, և անոր հա-
րուածը նպատակէն կանգնալափի դէպ 'ի
ձախն ելթար. բարեբաղդաբար այն գե-

ղեցիկ առաւտեան մէջ, մինչև որ հասանք
կորաւանատան հանգոյցը, աւազակացը-
հանդիպեցանք:

Այդ հանգոյցը Տիլիժանու Հովտին մէջ-
տեղն է, լերանցամիջն՝ շատ գեղեցիկ գիրք
ունի: Ի՛նչև որ մեր կառքերը լծեցին և
մեր ճանապարհագրերն նայեցան, համա-
նուն գեղն իջանք պարտելու. որ ըստ ար-
տաքին ձևոյն՝ արևելեան է ըստըմբին. ոչ
մի կերպով չի յիշեցնէր Ռուսաստան, նո-
րա բնակաց տիպը, տներուն դռնի և ներ-
սի տարազը, որք շարուած են կարկաշատ
Ալշտեի երկու ափերուն վրայ. ասիական
ձևով խանութնին՝ տսիական ապրանքնե-
րով՝ խառն երևոյթ մի կ'ընծայեն, պարս-
կական ընդ թաթարի: Մարդ կը զգայ որ
անձանթ աշխարհի մէջ է. և շիս կարող
հաւատալ որ այդ՝ մասն է Ռուսաստանի. և
եթէ այդ անունը ունի այս տեղ զօրութիւն
կամ նշանակութիւն:

Քիչ յետոյ իմացայ որ այդ անունն « ա-
հաւոր է և 'ի պատուի », խօսեցով մոսկո-
վացի ռճով, Նով-Վորոգի Հպատակներուն
միջոյ, 'ի ձեռն իվան-Վոռոգի հաւուն
« միացընողին Ռուսաց երկիրը »:

Պաղարին մէջ թափառած միջոցիս, ե-
կան հասան 'ի Գարը-Վալտայէ երկու կառք,
երեք երեք ձիերով լծուած, զանգիկներն
հնչեցընելով, թաթար կառավարներով Կա-
ռաց մէկու հետ կար ձիաւոր մի, ոտքէն
գլուխը գինավառ Ռինալդօ-Ռինալդիի
ձեռով:

Նոյն միջոց ինձ մօտեցաւ հանգուցի վե-
րակացուն, առաւ պաշտօնէի հագուստով,
և տալով ճանապարհադիրս ՊՊ. Սթարու
սիլքի և թովիլի ինձ տուած ծանուցա-
գրովը, պաշտօնական ձևով և յարգու-
թեամբ ասաց, ձիաւորը ցուցընելով:

— Այս զինաւորեալ ձիաւորը ձեզ ա-
ռաջնորդ տրուած է:

Ես զարմանալով նայեցայ գեղեցիկ ձիա-
ւորին. Գա տեղացի քով թաթար մի էր,
նման կրիթ խաղախի, արևելեան զինուո-
րական տարապով, գլուխը՝ մորթէ մեծ
գտակ գրած: Ասին վրայէն անցուցած էր
հրացանի, մորթէ պատեանի մէջ՝ սուր,
սուին, ատրճանակ, կազմ և պատրաստ
ըստ ամենայնի: Համետին վրայ տեղաւո-
րուած՝ պատրաստ կը սպասէր հրամանիս:
Այլ ես հրամայելու սովորած չլինելով, իս-

կայն շկարողացայ Հրամայել, կառավարիս ասելով որ քէէ ձիերը, միայն այնչափ պրու-
ցնցի ձիաւորին:

— Ինչպիսի՛ք քաջ է:

« Ահա՛ ուր տեղ կը սկսի » ըսի մտքէս, ետեւս լսելով իմ անձնապահէիս ձիոյն տրորիւնը և ղէնքերուն ձայնը. « ահա, ուր տեղ կարէ ի անձնապահով գնալ »:

« Սահկոյի է, կարծեմ, մտքէս անցածը...

Ինձ զինուորեալ ձիաւոր տալը կը նշա-
նակէր, որ այնպիսի տեղերէ պիտի ան-
ցնիմ, որ ըստ բացատրութեան գլխաւոր
կառավարչին՝ Սթարտսելքի գորավարին,
« յանձնտանգ ճանապարհորդութիւն » գի-
գրուած էր ծանուցագրիս մէջ և կարեւոր
ձիաւորները, նազանգական պահանջորդնե-
րէն »: Ուրեմն այժմ կայ կարեւորութիւն և
այն պատճառի համար տուին ինձ:

Այդ ձիաւոր պահապանը, տեղացի բար-
բառով « չափար » կը կոչուի: Աստի մինչև
ցԱյրարատ ձիաւոր պահապանով գնացի,
և 'ի դարձիս' մինչև Տելիժանու հովտին
բերանը:

Եւ որովհետև անվտանգ եղաւ իմ ճա-
նապարհորդութիւնս՝ աւազակաց և մար-
դապանաց մասին, վասն որոյ սորա պաշ-
տօնը հետեւեալ կերպով կը կատարուէր.
սովորաբար կառքիս ետեւէն կու գար, և
երբեմն քովէն, և երբ կը նշմարէր դիմա-
ցէն սայլեր, որ և իցէ, բարձր կը կանչէր
« ախարդա », և մտրակով նշան կու տար որ
ճամբէն դուրս քաշուին, և կամ առաջէն
գնալով՝ մեծ ժրտութեամբ ճանապարհը կը
մարդէր, նուաստ անձիս համար:

Հասնելով 'ի Հանգոյցը միշտ ուսէվիրայից
բարի ձեռք տալը չէի մոռանար. և նորս
հանգուցէ հանգոյց կը փոխուէին:

Եայտնի է՝ որ շատ բան գրուած է կով-
կաստու լեռանց աննման գեղեցկութեան
վրայ, և մանաւանդ Վրաստանի պատերազ-
մական ճանապարհին մասին, նոյնպէս Գա-
րեալի պահակին և տնոր ապիցուցիչ զըր-
բին վրայ, հանդերձ իւր միմուռ և գգը-
չացող Թերեքովն, նորա լիաջուր միջոցին:
Ո՛վ չէ յափշտակուած Գազըէկի հոյակապ
տեսարանովը, ոչ այնչափ հումանուն հան-
գուցին կողմէն, որչափ որ Գորի հանգուցէն,
ուր նա յանկարծ կը բարձրացընէ ալեռ-
րեալ գլուխը՝ ահագին ծայրերուն մէջէն,
որք կարծես, առաջի կողմէն, նորա անձնա-

պահապետ կանգնած են: Զմով չէ գարմա-
ցուցած հիւնալու տեսարանը Գուգարի
վրայէն, ուր ապառ, յափշտակուած և
մի և նոյն ժամանակ ահաբեկ տեսութիւնը՝
ահագին բարձրութիւններէ որք կը ձեացը-
նեն կովկասու կատարքը, կը դառնայ լե-
րանցամէջ տեղուեցներուն, ուստի առաջ
կը խաղայ Արապուս գետը: Մարդու խել-
քը կը դառնայ, սիրտը կը վշտափ, ոչ ցըն-
ծայից բերկրութիւն և ոչ յերկիւղէ. այլ
մտածելով որ երկնամերձ բարձրութեան
մէջ կը գտնուիս, ուր տապաղին ամառան
օրը՝ աշնան պախրցին ոսկերացք կը հասնի
և նուրբ ոգը ականջացք մէջ կը խօսի:

Այդ պատերազմական ճանապարհին
հիւնալու գեղեցկութիւնը ամենուն յայտ-
նի է: Ո՛վ որ իսկականը տեսած չէ, կրնայ
ծանոթանալ Մեչքերքի գեղանկար տեսա-
րանացոյց պատկերներով և Թիֆլիսի լա-
ւազոյն լուսանկարներով:

Տելիժանու հովտին գեղեցկութիւնը շա-
տերուն անձանթ է. շատ քիչուորք տեսած
են այդ տեղուանքը, վասն զի սակաւք կը
գտնուին ցանկացողք նորանոր տեղեր տես-
նելու, հանգեմ ձեռամեծ գուարու-
թեամբ, ինչպէս է Ստորին կովկաս աշ-
խարհս: Այդ սահաւտ որ ճանապարհորդ-
ներէն լսած էի որդէն՝ որ Տելիժանու
հովտը, Թերեքի և Արագուսի հովտնե-
րէն շատ գեղեցիկ է: Շատ տեղամ կարգա-
ցած եմ և ակնառուս անձնեցներէ լսած,
յոմանք թէ աշխարհի մէջ չկայ Վրասիորի
նման հրաշալի զիրքով տեսարան, ինք ճա-
նապարհորդն կը մօտենայ Ոսկեղջեր և Կ-
Պօլսի, և կամ կը դիտէ այդ տեսարանը
Պօլսոյ գերեզմանոցին բարձրաւանդակէն,
'ի մէջ առնելով Իսկիւտար, Իշխանայ կղզի-
ներն և Մարմարա ծովը. այլք կը դուրսն-
թէ Ղրիմու հարաւային ափանց նման գե-
ղեցկագիր և հանդիսատեսիլ տեղ բոլոր Եւ-
րոպա փնտռեալ չկայ, Ալուշթա, Եսպլթա,
Ալուփսա, Որիանդա, և այլն, թէ 'ի ծովէ
դիտելու լինիս և թէ 'ի ցամաքէ, ինչպէս
Եսպլայի և Չատըրտաղի բարձրաց վրայէն,
ուր բոլոր Ղրիմ անարգել կ'երեւայ երեք
ծովերով Սև, Ազաի և Սիւփա կամ Հո-
տեալ ծովը, կարծես ապիկած պնակի մէջ,
և թէ է այն կարգէ դուրս հիացուցիչ գե-
ղեցիկ գիրք. իսկ հրբորդներն Գանն թէ
մեր մուրապը Միլերկիական ծովուն այն

ափանց նման գեղեցկավայելուչ անկիւն մի շուհի, ուր մարգարտանման կը փայլին Գիւնը, Քանն, Նիւցցա, Մենտոն, Սան-Ռենո, և այս տեղուանք իրարու կապող նշանաւոր Նապոլէոնի Ա. ճանապարհը, որ «Route de la Corniche» է կոչուող, աննման գեղեցկութիւն ունին։ Եւ որ անհնաւոր եւ մայամ ամենայնի, Վոսփորի՝ Ոսկի Եղջիւրով, Իսկիւտարի, Հարաւային ափանց Ղրիմու, և «Route de la Corniche», և Վրաց պատերազմական ճանապարհին, և Հուսկ ուրեմն Տելիթանու Հովտին, կրնամ հաստատապէս հաւատաւել, որ բազմաթիւ իսկ աշխարհիս մէջ այդ չորս գեղեցկագոյն տեղերը՝ մեծ սխալմունք է։ Բոլորովին աննման են միմեանց այգոց գեղեցկութիւնը։ Բազմաթիւ Վոսփորը՝ Թերէրի հետ կամ Դարեալը՝ Տելիթանու Հովտին հետ, հաւասար է միայնքնելու երկու անհաւասար մեծութիւնները։

Տելիթանու Հովտը՝ Ուզունթալէ և Կարաւան-սարայէ մինչև ցրտըճունն Կէօք-չայի և մինչև ցԱրարատ, նախատիպ և համակերկ գեղեցկութեամբ ճշմարտապէս կը զարմացնէ զտեսողը։ Այս ճանապարհը պատերազմական ճանապարհէն գեղեցկագոյն է։ Վերջինս կը գերազանցէ իւր վսեմ խառութեամբ և ճշիշ Հոյակապութեամբ, սակայն միանգամայն ծանծրացուցիչ կը լինի միակերպութեամբ, միայն լեռներ և ժայռեր, այդ միածն մեծութիւնը կը ճշնեն և կը նեղեն զմարդ։ Տելիթանու Հովտը Հոյակապ է և այլատարազ։ Թէպէտ և սորա և մեծամեծ լեռներն և ժայռերն Դարեալի, Լարսի, Կոսիի և Գուլսարի բարձունքներէն նուազ չեն վսեմութեամբ։

Որչափ խորանայ Հովտոս, այնչափ աւելի կը գեղեցկանայ։ մեծաշուք կը լինի ճոխ բուսականութիւնն, այն աստիճանի է ծառերուն մեծութիւնը, որ չիս հաւատար թէ հեռու ես հասարակածէն և Դանդեհի և Ամազոնեան գետոց ափունքներէն, Կովկասու մէջ 'ի Լարսէ և 'ի Դարեալէ մինչև ցԳուգաւը, այն զառիվայրը՝ ուր ըստ բացարարութեան Պոնտոն, կը սկսին

Շեքէզ Հովիտը Վերաստանու։

ամենայն ինչ մերկ է և մեռեալ։ աստ՝ Ուզունթալէ մինչ ցԿէօք-չայ, մինչև բուն Մալթաններուն Սեմենովքա գիւղը, ամէն բան կանաչութեան մէջ կը կորուսի։ Մար-

դուս ակունջը հօս չի յոգնիր, ինչպէս հօս խուլ գողջմամը Թերէրի, այլ ընդհակառակն կը զուարճանայ ներդաշնակութեամբ ընդ քարինս կարկառոց բերեղանման ջրոց Ացստու։ Եւ Եւստ Թաշլանի կան հօս, որ մեծ կենդանութիւն կու տան տեղւոյն՝ իրենց երգերով կամ կարկաջներով։ ճայեր, վայրի աղուտիք, ատորակներ, մանաւանդ լեռնական կաշտակներն՝ ընդ երկայնութիւն Հովտին 50-50 վերստ, միշտ անմեկն ընկեր են։

Նշանաւոր է որ այս տեղի հանգոյցը Լուս Մոլդեանաց ձևքն է։

Երբ հանգուցին բակը իջայ, և երբ տանը քիւնտակ տեսայ բազմութիւ ընտանեք մեր գեղացւոց՝ վարմացայ, Բաց օդոյն մէջ ճաշելու կը պատրաստուէին, քովներին ալ սեղանի վրայ ինքնիք եռալու վրայ, սեղանին չորս դին և տակը կը վստային բացագոյն չէկ մազերով, կարմիր չապիկներով, բոբիկ ոտքերով նոցա տղայքը։ Լուս կանայք ամանները լուալու և սրբելու հետ էին։ չէկ և խարտեալ մուփիկները նոյնպէս կարմիր չապիկներով, որոնք քովանց կը կոճկուէին, բուն մուփիկներուն ձևով։ սեղանը աստուտելով՝ մեծ մեծ խաչակներեցին երեսներն։ Եւ այս ամէնը, անսովոր հանգամանաց մէջ, Սելի խորերը, արեւելեան կերպարանք մէջ, ասորագուց մէջ, այս ամէնը ակամայ աչքի կը զարնէր, և տեսանելիաց խաբէութիւն կը թուէին։ Ռուսաց լեզուն էր լսածս, բայց այլատարազ կը հնչէր։ վասն զի հօս՝ նոյն միջոցին, մի և նոյն Թամարովին կամ Փնեղագին, բուն ազգային Լուս ոճերով խօսած միջոց, դառնալով դէպ 'ի զմեզ բերող կառավարները կամ առ ռաշվիրոյս Թաթարներէն խօսք կը խառնէր։

— Էյ, վերակայու Փաշթա, առ աս պարոններուն ճանապարհազիրը։

Մէջ տեղ ելաւ չէկ մազերով Փաշթան, գեռ տղայ էր, Թաթար լեզուով կառավարներուն հրամաններ կու տար։ Նոյն ասիայի կոկորդախօս բարբառով կը պատասխանեն կառավարները։

1 Կաշտակներուն գոյնը սև է, գեղին և կարմիր շերտերով կամ գծերով, կ'ստէ հեղինակը։

2 Ոչ միայն Թաթարներն, այլ Հայոց հետ ալ խառն բնակող Մոլդեաններ՝ լաւ կը խօսին հայերէն։

Շատ քարի Օձէ առեղները և անիւն-
բուն լիսեռները, լծէ կողքը, կը կարգա-
գրէ նոյն փաշքան:

— Է՛յ, պարոն փաշքա, հօրդ անունը
չեմ գիտել որ զուրցեմ, ահա՛վիրաս ձայն
հանեց:

— Ի՛նչ կը հրամայէք:

— Ուտելու բան չունիք:

— Բան չկայ:

— Ի՛նչպէս բան չկայ, պարոն փաշքա:

— Բան չկայ՝ ասացի:

— Հաւկիթ չկայ:

— Չկայ. հաւերը չեն տծել:

— Կարո՞ք:

— Կարագ ևս չկայ. ուսկից տոնենք,
թաթարները թափառական գնացին:

Եւ այդպէս յամառ փաշքան մեզ ուտե-
լու բան չտուաւ: Պատճառը՝ կարծեմ այն
է՝ որ տեղացի Ռուս-Մոլդաւի ընդհան-
րապէս թշնամաբար կը վարտին Ռուսաց
հետ, մանաւանդ ազնուականաց. — « Դուք
զմեզ շան պէս վարեցիք, ուրիմ հարկ
չկայ մեզի հետ խօսակցելու »: Այս խօս-
քերը, կարծես, գրուած են նոցա գէ՛մբին
վրայ:

Զարմանք չէ. նոցա համար Ռուսաստան
օտար երկիր է, և նոքա Ռուսաստանի հա-
մար կտրած ձգուած կտոր մի:

Ի թարս-չայէ չիտակ ճամբով բարձրա-
նալով հասանք Տելիժանու քաղաքը: Զգա-
լապէս վեր ելնելով՝ գիմացիս կը բացուէր,
կարծես ի մագական լապտերի՝ ծործորե-
րուն չարք չարք գեղեցիկ երևոյթը:

Հօս՝ թարս-չայի և Տելիժանու միջոց, լեռ-
ներուն գեղեցկանիտ հովիտներուն մէջ,
տեսայ անդր-կովկասու թափառական բնա-
կիչները: Սորա՝ այն թաթարներն էին,
որոց գետնափոր որջիւր՝ բոլոր ամառը
գատարկ կը մնայ, և որոց գերեզմաննե-
րը զիս արմնացին նախընթաց օրը, մինչ
կ'անցնէի Գարաչայի անապատէն:

Այս թափառական ժողովուրդը ամե-
նէին նմանութիւն չունի այլ ասիացի և
ափրիկացի թափառական ժողովուրդոց հետ,
որք կը թափառին ընդարձակ դաշտերու և
անապատներու մէջ: Ասոր պատճառն ան-
շուշտ տեղւոյն լեռնային գիրքն է:

Այս գրախտատարագ կենքին մէջ
բանի՝ մեծ բանաստեղծութիւն կայ: Լե-
րանց հովտի կամ ծործորի մէջ, անպաս-

ճառ իրան գետակի կամ վտակի եկելք կը
տեսնես չարք մի վրաններու, որոց արտա-
քինը, շատ մեղամալքի կը դարնեն ճար-
տարարուեստ ձևովը, այլ ներքին զարդը
մանաւորապէս գեղեցիկ, երկնագոյն կա-
պերտներով և գեղեցիկահիւս փաթմեն-
րով: Ընդհանրապէս այս վրանները մեծա-
մեծ ծառերու լայն չութերուն տակ են: Հօս՝
ծառերուն չութին ներքե՛ կը տեսնես ամ-
բողջ առանձնեղու ժողովուրդը. այր մարդիկ,
ըստ իրենց արտօնութեան՝ ամենէին ան-
գործ կ'անցընեն առաւօտէ մինչ իրիկուն,
ծալապատիկնստած, լուսմունջ, ծուխ քա-
շելով: Իսկ կանայք կը կարեն, կը հիւսնեն, կը
մանեն, ոչխարի կաթը ի խնոցին հարելով
կարագ կը պատրաստեն, պանիր կը մակըր-
դեն և կը կերակրին իրենց տղայքը և գա-
տարկականաց էրիկները: Տղայք և ամե-
կունք բարձրակրճ կաղնիներուն կամ ըն-
կուգնելոյն մի ճիւղէն օրոց ձգած, տաօ-
տէ մինչ իրիկուն որսերով երգեր կ'եր-
գեն: Լեռներուն մի կողմը զգաստ շանց և
մի երկու փոքր տղայոց հսկողութեան ներ-
քև ոչխարներու բազմաթիւ հօտեր կ'արա-
ծեն. այդ է նոցա հարստութիւնն և պատ-
ճառ դրախտական կենաց:

Սորա տեղէ տեղ կը փոխադրուին, մի
գեղեցիկ դրքէ միւս աւելի գեղեցիկին, մի աղ-
բուրէն՝ միւսին, մի արօտէ՝ այլ արօտ,
մինչև որ փէլ պախըցին, որ այն բարձրու-
թեան մէջ՝ 10,000 տոք ծովուն երեսէն,
թէպէտ հարաւուրդուն է տեղիս, այլ խիստ
կը փէլ: Այն պախըցին կը քէլ կը տանի
թափառականները դէպ իրենց գետնափոր
բնակութիւնը, բնիկ բուխերիկներուն քով,
մօտ նախնեաց գերեզմաններուն: Սորա ի
գալ դարնան, նորէն թափառելու կ'ել-
նեն: Թափառական կենանք նոցա համար
դրախտ է, հայրենի բուխերիկները և գե-
տնափոր խրճիթները՝ քաւարան:

Շատ գեղեցիկ է նոցա կերպարանքն: Սո-
ցա նմա գեղեցիկներ և գեղեցկուհիներ
միայն գրախտաման կենանք կարող է
ստեղծել: Կը խոտովանիմ ակամայ կամօք,
սոցա վրայ նայելով կը զմայլէի:

Քանի մի թափառաբնակ խմբերու քո-
վէն անցնելով, կանուխ՝ ճաշի տօնեն, հա-
սանք Տելիժան, որ հովտին կենդրոնն է:
Բաւական մեծ քաղաք է, գիրքը՝ կարգէ
զուրս գեղեցիկ, ձեւ՝ բոլորովին արեւելեան

Պ. Մորտուլածէի հետ վերջին անգամ՝
ճաշի նստանք: Գոխանին տէրը համեղ
« չըղրթմայով » (սեռակ մի մսաթան) հար-
կեց զմեզ. յետ որոյ անհրաժեշտ արեւելեան
շամիրով խորովածը : Հօս րաժնուեցայ
իմ սիրելի ընկերէս. Պ. Մորտուլածէ 'ի
Տելիժանէ գէպ 'ի լեռները պիտի երթար,
ուր կառքի ճանապարհ չկար, այլ միայն
ծիաւորի: Այս կետէն ես պիտի ճանապար-
հորդէի առանձին, հարկաւ ռահվիրայն
հետս:

Զեմ կարող լուծեամբ անցնել Պ. Մոր-
տուլածէի իշխան ծառային սրտաճմրէի հրա-
ժարականը: Սա թէպէտ և թաթար, այլ
ինձ հայրենակից էր, Սարաթովցի. զի գա-
ւառիս Գուզնեցի վիճակէն ցինուոր առ-
նուած էր, ուր-ծնած և մեծցած բոլորովին
անգէտ աշխարհին հանգամանաց:

— Բարով կիցիք, մեծարգոյ տէր, ասաց՝
բարև միաս առնելով, ձեզ բարի ճանա-
պարհ:

— Շնորհակալ եմ, իշխա:

— Զարծիր շնորհակալութեան. դուք հի-
մա ասէի յԱյրարատ կ'երթաք:

— Եթէ Աստուած յաջողէ:

— Երկաթի՞ ճամբով:

— Ինչպէս:

— Գէպ յԱյրարատ՝ երկաթի ճամբով
կ'երթաք:

— Ինչպէս երկաթի ճամբով, այն կողմն
երկաթի ճանապարհ չկայ:

— Այդ ինչպէս կ'ըլլայ, մեծարգոյ տէր,
միթէ ձեր ճանապարհը Ռուսաստանի վրա-
յէն չէ: — Յայտնի էր որ խեղճ իր խել-
քովը և աշխարհագրական աղբատին ծա-
նօթութեամբ, զոր ստացի էր տունը և 'ի
ծառայութեան մէջ չէր կրնար որոշել որ
կողմն կ'իյնայ Ռուսաստան:

— Ոչ, իշխա. Ռուսաստանի վրայէն չէ
իմ ճամբաս գէպ յԱյրարատ. Ռուսաստան
հօն, անդին կ'իյնայ:

— Հօն. ես կարծէի որ այն կողմ թիֆ-
լիսն է:

Դիտթած ետ դարձաւ նայեցաւ. երևա-
կայելով որ գիւռ աւելի կը հեռանայ Ռու-
սաստանէ. որ տակաւին իրեն սիրելի էր:

Ահա սրտաշաղճ գէպք մի. այնպիսի հե-
ռաւոր տեղ քնել տարել են խեղճը, որ
չդիտթել է, թէ որ կողմ կ'իյնայ իւր հայրե-
նիքը, արեւմուտք արդեօք թէ արեւելք:

Եռածի կառքս առաջ գնաց - Կոնգակին
ձայնը արդէլ եղաւ ինձ հասկընալու գեղե-
ցիկ վրացիին յետին խօսքերը. միայն այս-
չափս լսեցի. « Երբեք պիտի չմոռանամ
այս մեր իրար հանդիպելը »:

2

Աքսորական Մոլոքանաց մօտ. —
Կէօք-չայ ծովակը:

Տելիժանէ անդին դարձեալ լեռան 'ի
վեր բարձրացանք, փոքր-կովկաս կոչուած
լեռանց վրայ: Ակրոսն վտակի մի եկերքէն,
որ պղբերակուէր էին Ողստեւու լեռնա-
յին, արագավաղ և գեղեցիկ գետակին. մօ-
տէն անցնելով քանի մի թափառական թա-
թարաց խմբերուն քովէն, որք պատսպա-
րուած էին վարսագիւղ և հսկայաբերձ ծա-
ռոց շուքին տակ, ընդ երկայնութիւն ճորա-
կին:

Ուղղարեւրձ սեպացեալ լեռնէն վեր կ'ել-
նէինք. որոյ նմանն երբեք տեղ մի տե-
սած չեմ: Հանրածանօթ է Մլեթէ ցԳուգաւր
զառիվիւրը, Վրաց պատերազմական ճանա-
պարհին վրայ, ուր ահաւոր է վար նայիլը,
ուր հաստատուն ջիւղերով ճանապարհորդին
անգամ՝ իսկը ման կու գայ և արինը ե-
րակաց մէջ կը պաղի, տեսնելով ահագին
բարձրութենէ գէպ 'ի վար խորածոր ան-
դունդը, ուր այնպէս կ'երևի թէ ճամբան
լեռան վրայէն չէ, այլ ահագնաբերձ ան-
դունդին ծնօտին վրայ. սակայն Տելիժանու
զառիվիւրը, առաւել ևս սեպացեալ է: Սա-
կայն վերջինս այն ահաւորութիւնը չունի,
թէպէտ իբրտ հսկայածեռ ուղղաբերձ պա-
տի մի վրայէն 'ի վեր կը բարձրանաս, իսկ
վայր ինչեւլու միջոց այնպէս կ'երևի, իբր թէ
ահագին անդնդոց վրայէն թռչելով պէտք
է անցնիլ: Ինչպէս զրուցեցի Տելիժանու
զառիվիւրը, հանդերձ իւր սեպածեռ դրիւքը,
այն ահաւորութիւնը չունի. զի ճանապար-
հին երկուստեք բարձրաբերձ ծառերը կը
քողարկեն անդնդոց ահաւոր տեսիլը, որոց
եզերաց վրայէն է լեռնաճանապարհը: Ի
Գուգաւրէ 'ի Մլեթ իշխելու միջոց, միշտ
աչոց զիմաց ունիս կառքին կամ աջ կամ
չորում՝ նստած ես ձախ կողմէն՝ ահա-
գնատեսիլ անդունդը, և յակամայ կամս
մարդու մտքէն կանցնի՝ որ կառավարին

փորք անդգու շուքեամբն կամ անգամատու-
թեամբ դարձուածքներուն միջոց, կրնայ
կառքը թաւալիլ անդնոցոց խորը, Բաւա-
կան է միայն որ ձին խորի կամ յամսոռի,
կամ հոյն սաստիկ փշէ լեռներէն, որ կառ-
քը կամ սայլը ցած պատին վրայէն թա-
ւալզլոր ձիերով և ճանապարհորդներով
'ի միասին քշէ տանի անդունդը Պատահած
է ողբալի արկածս արդէն Գուգար-Մլի-
թեան զսոխիջին վրայ, կոտոր կոտոր եղած են
ամէն տեսակ կառք և սայլք, միտած են
մարդիկ, սատկած են ձիեր:

Չէ կարելի տեղի ունինալ Տելիժանու
զատիկին վրայ նմանօրինակ արկածներ,
չօս չեն յաճախել մեծամեծ իջկանաց
կամ թղթատարի կառքեր, բեռնաբարձ եր-
դիրով, ոչ թե աւոր սուրհանդակի կառքեր,
(կողմնակի կաշկեղանն թե երբ առագաս-
տանման), որք լեռնանցին հովերուն դիմաւ
զեւ կը լինին. այս ճանապարհին քողոյնե-
րըն են թեթեւ թղթատարի կառքեր. դար
'ի վեր ելնելու միջոց երեք ձի կը լծեն, իջ-
նելու միջոց երկու ձին բաւական է. հեշ-
տեաւ կարելի է այս տեսակ կառքերը
ձիոց արագ վազած միջոցն իսկ՝ ճանապար-
հին օժապտոյտ դարձուածոց քաշ բռնել
կամ բողբոջի զադրեցընել, Դիցուք թէ
պատահեցաւ զժաղզղութիւն, չըջեցաւ
կառքը, այլ սակայն մինչև 'ի վայր չի գլու-
րի, ծառերն արգելք կը լինին. հօս կարե-
լի է ձեռք, ոտք կտորիլ, այլ կենաց փնաս
չկայ. իսկ Գուգար-Մլիթեան ճանապար-
հին ամենայն արկածք մահաբեր են:

Այս է տարբերութիւն ընդ մէջ Գուգա-
րի և Տելիժանու:

Քաջակազմ ձիերը երկու ժամու միջոց
դիս անդր-կովկասեան լեռանց զօսալոյն
բարձրագոյն կէտը հասուցին: Այս բար-
ձրութիւնը աւելի զգալի եղաւ ինձ համար
այն պատճառաւ՝ որ ներհակաբար Տելիժա-
նու հովտին տապալիքն ջերմութեան, հօս
մինչև ոսկորներուն թափանցեց անմանայն
ցուրտ օդը, թէպէտ և հարաւային պայծառ
արեգակը նոյնպէս ծագած էր գլխուս վրայ,
ինչպէս 'ի հովտին, ուստի քանի մի ժամու
միջոց հասած էի 7-8 հազար ոտք բարձրու-
թեան:

* Հեղինակը կը ծանուցանէ որ կատակ չէ ա-
սածը, արևը երնելէն առաջ ելած է ինքն բուր-

Ո՛ր ծանկուեցաւ Տելիժանու ճոխ բու-
սականութիւնը, Վարը հեռուն լեռանցա-
մէջերուն և ծախաց մէջ շուքի նման կ'ի-
րեայ, այլ իմ չորս կողմս անկնդան մեր-
կութիւն, յար և նման Թամարովի և Սամա-
րի գաղտաց: Պատրգին ամէն կողմէս թա-
փանցեց, հարկ եղաւ որ փաթթալ իմ շալիս
մէջ. այն շալին որ Պիտրովի օրը (29 յունի-
սի, գլխաւոր առաքելոց տօնին օրը) 1879
Չատրը-Դադի բարձանց վրայ տաքցուցել
էր դիս, և 1881 Մայիսի վերջերուն կէտա-
սի բուրգին ծայրը, զէմ յանդիման Սահ-
րայի * իկարուն աւաղներուն:

Շատովի երեցաւ գեղը. ինչպէս որ տե-
ղոյս կերպարանքը նման էր հիւսիսային
գրից՝ նոյնպէս էր և գեղին երևոյթը: Այդ
ուստ գեղ էր աքսորական Մոլդաւանց,
Թէպէտ և գիտէի արդէն, այլ կամաւ խօսք
բացի սոցա վրայ կառավար Թաթարին հետ

— Այդ ի՞նչ գեղ է:

— Սեմինովսկայ, առս Մոլդաւանց գեղ է:

— Ուրեմն Մոլդաւաններու գեղ է:

— Այո, Մոլդաւաններու:

— Ինչո՞ւ նոքա Ռուսաստան չեն բնակիր:

— Աքսորել են զիրե՞ք:

— Ո՛ր է արսորողը:

— Ռուսաց մոլան-փոփը:

— Ի՞նչ պատճառաւ:

— Մոլդաւանը Ռուսաց փոփին փող տը-
ւած չէ, փոփը քել է զիրենք առ մեզ:

— Ի՞նչպէս. լաւ կ'ապրին ձեզ մօտ:

— Ի՞նչպէս չէ. ունին շատ ցորեն, ձիեր:

Գեղը՝ բոլորովին Ռուսաստանի գեղերուն
ձին ունէր: Ինձ այնպէս երեցաւ՝ որ կար-
ծես մոգական զօրութիւն մի գիտ Տելիժա-
նու ճոխ հովտէն առաւ տարաւ հիւսիսային
խիտ կերպարանքով գաղտային գաւառ-
ներուն մէկուն մէջ:

Ոչ ծառ, մի ոչ թուփ մի կար չորս կող-
մաւ: Միայն արտավար դաշտեր, ցորենի
լայն լայն ափսներ, այլ ցորենը դեռ հա-
սած չէր 'ի դաշտին: Ոգտառտս ամառն մէջ,
մինչդեռ 'ի Պետրբուրգէ յուլիսի 20ին
կիներու միջոցիս, հօս Պաւլովսկի և Յարս-
կի Սելիշի չըջակալքը սկսել էին հունձքի,
հօս 'ի հարաւ, գրեթէ Արարատայ ներքեւ,
ուր խաղող և քիւմիշ հասունցած են

գին ծայրը, և շաղով առաւօտեան զով օգէնպա-
արսաբարուած:

կէօք—չայի չըջակայքը՝ դաշտին ցորենը
գեռ քաղուած չէ։ Ռիբուսի խոտաշունչ և
սիբերիական է տեղիս. 'ի զոր արքարած
չեն հոս առաւ աղատախօս Միդորանները։
Երկու ամիս է հօս ամառը, և այն՝ ինչ
ամառ. — ցուրտ և խոտաշունչ հովերով։
Պայծառ արևն հօս չի տարցըներ, իրր թէ
հարաւային չլինէր, այլ լափրանդական
կամ բեռնային։ Սակայն և բեռնային ա-
րևը, թէպէտ և ոչ ընդ երկար, այլ կը տաք-
ցընէ և կը ջնոռացանէ ամառը։ Սիբերիոյ
մէջ ևս տարեկ և հնչտառ է արևը քան
այս տեղ։ Գիտցիկ են « Ռուս մոլլաներն »
ուր պէտք է արքորի տարաբաղդ Միդորան-
ները։ Մեծ հետաքրքրութեամբ զննեցի այդ
Ռուս գեղը, որ ձգուած է Սիբի խորը, գրե-
թէ 'ի Պարսկաստան, Գեղեցիկ առասկան
տեսիլներու ջուրը կարծես երևիդ կը
փչէ, թէպէտ և մեք սովորած ենք։ Այլ
հօս՝ կարելի չէ գրուցել ինչ որ կատմայ
կամ ելած է 'ի սրտէ հանգուցեալ Նիքրա-
տովի, Ռուսաց գիւղական տեսիլներուն
վրայ նայելու ժամանակն։

Որպէս մայր դը որ զգչեմաւ զաւակաց,
չեծէ կըտցար ընդ գաղտավայր աղբարագեաց-
նթէ մըշակ արորագրի հընչէ զերգ,
Նիքո ողբական զըտող առնէ սրտաբեկ,
Յանտառ քոյին մայրի գողգոլ կողամախ,
Խմ հայրենիք, տըխուր պատկերդք են, աւաղ։

Հօս՝ չկան մայրիք։ — գոնէ լինէին դտուն
կողամախիք, — բնաւ բան չկայ։ Գոնէ երգ
մի, թող լինէր տխուր և լալական, այլ առ-
տերէն հնչէր մի կողմէ. — չկայ և այն։ Մի-
այն աղբարկոյս՝ գեղին չորս կողմն՝ թրիք-
ներու շերտեր, և ածուք կաղամախ և գետ-
նաթնձորի. ասոնք են միայն սոցա գեղին
զարդն՝ որ կը յիշեցընէ հեռաւոր Ռուսաս-
տանը։ Կանանց գլուխները կապուած էին
գոյնզգոյն լաշակներով, չընդգետնէրը
Մոսկուայի պարսիկ չիթ կտաւ, կարմիր
շապիկ հագած էին առ հասարակէրիկ մար-
դիկ և տղայք. տղայք թէպէտ 'ի հարաւա-
կողման ծնած, այլ մաղբերիկն կանեփի նման
գեղիկն։

Ռուսաստան՝ այդ տղայոց, նոյն իսկ
մեծցածներուն համար՝ անծանօթ աշխարհք
է. « Օտար և հեռաւոր աշխարհք », ինչ-
պէս նոր Գոլիբեն, ուր ինքնակամ արքա-
րական գնաց՝ անծանախէին գիտութեանց
Միքելանջի—Մաքլայ, կամ 'ի պայեղմիտաւ։

Երբ մի հանգուցի մէջ ինձ կառք կը պաա

րասաէին և ձիերը լծիւր վրայ էին հար-
ցուցի ծերու մը։

— Ռուսաստանի կարօտը չէք քաշել։

— Ժամանակ չունիք, փոքրելով պա-
տասխանեց ծերը։

— Ռոլորովին մուսցած չէք։

— Ինչու մուռնաք։

— Շատ ժամանակ է ելածնիդ։

— Շատ ատեն է, համարեա թէ տարի-
ներուն համարանք մուսցած ենք։

— Ռատր՝ քչեցին դժեղ։

— Մենք Թամբովցի ենք. կան և Սարա-
թովցիք։

— Հայրենակիցք, Երևան։

— Դուք Սարաթովցի կը լինիք։

— Այո... լաւ է ապրուստնիդ։

— Փառք Տուսովին, կ'ապրիք, ունինք
հաց։

— Այլ ցուրտ է ձեր աշխարհքը, Սիբե-
րիոյ կը նմանի։

— Ճամբրիւտ է. տաք օրերս քիչ են, եր-
կու ամիս միայն ամառ մեզ կու տայ։ Այս
տուած. և այն ինչպէս կը տեսնէք, ինչ
ամառ։ Գուք, ներեցէք հարցմունքիս, ուր
կ'երթաք։

— Այո՞մ կ'երթամ Երևան։

— Պաշտօնով, անշուշտ։

— Ոչ, այնպէս...

— Թերևս սոցականաց տեսութեան։

— Ոչ... փափոք եկաւ ինձ Արարատը
գիտելու։

— Ուրիմն, ուխտաւոր էք։ Տեղացիք
աղօթելու կ'երթան հօս։

— Ես ևս գրիթէ նոյն բանին համար։

— Բարի գործ է։

Գիտեցի որ ծեր Միդորանք աւելի բարե-
սիրտ են և խօսու՜ն՝ քան երիտասարդներն։

Երիտասարդք ընդհանրապէս խոժժու կը
նային մեզ Ռուսացս վրայ։ Մեք նոցա հա-
մար ոչ թէ միայն օտարք եմք, այլ մասամբ
թշնամի կը համարուինք. մենք քչեցինք առ-
ցա հայրերը իրենց բնիկ երկրէն, անիրա-
ւեցանք նոցա գէմ։ և չէ կարելի որ նոցա
սրտին մէջ չունենայ տեղիք ատելութեան
զգացմունք առ Ռուսաստան և առ Ռուսս։
Իրերոց համար միշտ հայրենիք է Ռուսա-
ստան, ժամանակը թիթեացուց հինանիրու-
ւութիւնը, նոցա զմեզ տեսնելով կը յիշէն
իրենց հեռաւոր հայրենիքը։ Մեք նոցա
համար թէպէտ և եմք « չունք » այլ հայրենի
աշխարհին ։ Բոլորովին հակառակն է սա-

կայն երիտասարդաց դասուն համար:

— Կ'ուզեմ դառնալ 'ի Ռուսաստան, հորցի չէի երիտասարդին մէկուն, որ զեղեցիկ կապայ մի հագած էր, և գլուխը տեղացի գլխորկ:

— Ինչ գործ ունիմ հօն, փոխադարձ հարցուց երիտասարդը:

— Այնպէս, տեսնելու համար:

— Այ, տէր, փափաք չունիմ:

— Ինչու:

— Հօն զմեզ, Մոլդաւաններս, կը բանտարկեն:

— Այժմ այնպէս բան չկայ:

— Հաւատալս չի գար:

— Ինչու, չես հաւատար:

— Ուրիշ կերպ կը պատմեն մարդիկ. — զինուորները:

— Այո, աւելցուց մօտ եղող կնիկը, որ ինձ քուստ բերած էր խմելու, երբոր մէկը աղօթք առնելուն համար բանտ փակեն, ինչ կ'սես այդոր:

Այդպիսի առաջարկութեան զիմաց ինձ լռութիւն ինկաւ: Քաջ կնիկմարդ:

Սեմինովրայէ ելած միջոցիս բողբոլին մտքես ելած էր որ նշանաւոր կէօք-չայ ծովակին մօտերն եմ: Հիւսիսային-արեւելքէն սաստիկ կը փչէր քամին: Յօրտըր ամէն կողմէս կը թափանցէր, չայլ բաւական չէր, կաշնայ կարմիր ֆլանելէ ստատուով զգեստը վրաս առի, զոր զենել էի Պետրբուրգի Արարատ երեսելու համար:

Յանկարծ չսպասած միջոցիս՝ զիմացս բացուեցաւ հիանալու տեսարան: Եթէր հազար կամ աւելի ևս ծովուն երեսէն բարձրութեան վրայ, 'ի մէջ ժանեւոր և զոգաւոր լեռներու նոր ծով մի տեսայ: Այս ծովը Եայլըյի և Չատըր-դաղի բարձրութիւնէն 2000 ոտք ևս աւելի բարձրութեան վրայ էր: Այո, այս տեսարանս յիշար ինտութեան հրաշալեան մին է: Անոնք ծով, անհերք ջրերու կուտակութիւն, որ հօրիզոնէն անդին կ'անցնէր. նոյն կապուտակ տարրն էր, ինչ որ կը նշմարեց Սիւս և Միջերկրական ծովըր տեսած միջոցիս, — սակայն ինչպիսի՝ տեղ, լերանց զօտիններու վրայ, 7(10) ոտք բարձրութեան մը:

Այն էր նշանաւոր կէօք-չայ ծովակը: Երբանցս վրայ էր, տխուր գոչէի. Կարեւոր բան չէ այդ բարձրութեան վրայ ծով:

Սակայն ծով էր այն, սովորական այլ ծովերուն նման ալիքներով, որք առաւել

մակերևութին վրայէն երեւագին անցնելով, ափանց փայտերուն և քարերուն վրայ ահագին շառաշմամբ կը խորտակէին, ինչպէս այլ ծովուց վրայ՝ նոյնպէս և ասոր ողբագին ճայերը ման գալով՝ օդը կը լեցունէին իրենց կարկաճներով. նոյն խիստ մեծութիւնը, նոյն երևակայութիւն վրդովող անձանթի գիրքը, թէ այս ախրտ պապեցրնող կապուտակին անդին, հետեւ ինչ կայ: Գորշ և մոխրագոյն լեռներ կան այս կապուտակին աջ և ձախ զին, իսկ աչաց առաջ անծայր հեռաւորութիւն, անչափելի ջրերու կուտակութիւն:

Անցնելով թաթարի փորրիկ դեզ մի, իւր սեւագոյն աթարի բուրգերովը կամ կոնքերով, ճանապարհը կէօք-չայի հարաւային-արեւմտեան ափանց վրայէն առաջ կ'երթայ: Գեղիս արտաքին ձևին վրայօք նոյնը կարելի է գրուել, ինչ որ կը գրէ Ի. Ս. Փոլեպովը, որ այս տեղերէս անցած է 1879ին: Երբ — Պայագիդու և այլ գեղերու հնութիւնը բնակելու համար: «Մօտեմալով» Երբ — Պայագիդու, այսպէս կը գրէ, ևս չէի կարող հաւատալ՝ որ այդ լինի քաղաք. նախ և առաջ այժի զարկածը բարձրագէղ աթարներու կոյտեր են. այդ կոյտերը տեղացոյն հարստութիւնն է, զի կէօք-չայի հարաւային-արեւմտեան լեռանց վրայ չկայ ոչ ծառ և ոչ թուփ: Միով բանիւ հօս կեանք վարելու զլիսաւոր պայմանը տուարածա կանութիւնն է, որ վառելիք կու տայ և նիւթ կրակի՝ կերակուր եփելու: Սնտառաց պապատութիւնը ստիպած է երկրացին խոր փորեր բրել և ստորերկրեայ բնակութիւն շինել: Նիւթի թեան միջոց շատ անգամ փայտի օգտաւոր քարը կը լեցնէ. ստորերկրեայ փոսին չորս պտոյտը բարէ պատեր կը շինեն, որք կը բարձրանան ևս սակաւ մի երկրիս երեսը: Այդ անկող քարերը առանց կրի, նախնական սովորութեամբ իրարու վրայ կը շարեն, աւիքը գերաններով և մարդակներով կը շինեն, և հողով կը ծածկեն: Տներուն մօտ շինուած փարախը կենդանեաց համար, և որումը ցորենի զէգերուն համար, այն անտաշ քարէն կամ լաւայէն կը շինեն, այս քարերէն կը պատրաստեն անօթներ, ինչպէս սանդ և գուռ, և այլն: Եւ այսպէս՝ եթէ չլինին գեղին մօտ աթարի բուրգերը և ցորենի զէգերը և գետնափոր խրճիթներուն ձխնելագի մօտ

խը, անկարելի կը լինի աւանը զանազանել լեռնուտ և ըրաշատ երկրիս բնական խոր-տաւփորտ ելէջներէն Կէօք-չայի հարաւա-յին-արեւմտեան ափանց ժայռերուն վրայէն անցնելու ժամանակ շատ կը հանդիպին նը-մանօրինակ շինութիւններ. ոմանք նորաշէն, այլք հինէն մնացած, և այժմ երեսի վրայ թողուած: Այլ այժմեան հովուական շի-նութիւններն ևս քիչ տարբերութիւն ունին հիներէն, ինչպէս մեր օրերուն հովիւներն շատ տարբեր չեն 'ի հնումն Սիփոյ արեւ-մտեան զին եղած անուանի հովիւներէն 1. Ով որ ելած է Չատըր-դաղի վրայ և տե-սած հօն թաթար-հովիւները իրենց պելաս-զեան քարաշէն խրճիթներով, այդ նախնա-կան ձևով 'Ներքովթայ ժամանակակից և այլ հին ասիացի պատմական թագաւորաց բնակարանաց վրայ ունի զաղափորմի:

Առաջիկայ Մոլոքաններուն գեղն և Ելե-նովքա՝ հանգույցը հասնելու ճանապարհը Կէօք-չայի քարուտ և սեպ ափանց վրայ է: Այս ճանապարհին այնպէս կից են լեռնե-րը, որով և ճանապարհն անձուկ, որ ճա-նապարհորդին սիրտը միշտ երկկիզի մէջ կը լինի, զի մի գուցէ անիւներուն արագ արագ թաւալման և կոտրին անգոյշ դառ-նալու միջոց՝ զլորի ինչայ յանկարծ փըր-փրեալ կապոյտ լճին մէջ: Ախանցմէ ոչ շատ հեռուն, դէպ 'ի ձախ, կ'երեւայ փոքր ժայ-ռուտ կղզեակ մի, անմատչելի բերդի նման. կանգուն են հոն հին ապրիսպիներ, որոց վրայ կը բարձրանան կոնաձէ հնոց եկեղե-ցւոյ գմբէթներ: Այն Հայոց հին վանք մի է. տսոր վրայ Պ. Զեմիսքի Երեւանու ստորա-գրութեան մէջ կը խօսի: Նա կը գրուցէ որ այդ վանքին հին եկեղեցւոյ դրան վրայ կայ վերադառնութիւն մի, որ կը յայտնէ թէ 1557ին թուրքաց Երեւանու գաւառը 'ի Պարսից տանելու ժամանակ՝ Երեւանու կա-ռավարին էր սմն Երաթու պ թէկ:

Խորին առանձնութիւն մի կը ընչէ այդ անմերձեանի կղզեակը, որ ինչպէս ինքը, նոյն և ծովակը հայերէն՝ Սեան կը կոչուին: Այդ առանձնութեան լուծութիւնը կը վրդո-վեն միաձև ալեաց շառաշը և ծովային ճա-լից ողբերգակ ձայնը:

Մինչև Ելենովքա Կէօք-չայի սեպ ափե-

րով կ'երթայ ճանապարհը, Հօս տեղ մի՝ ուր ձմեռներ մերձաւոր լեռներէն ձնան հիւսեր կը թաւալին, շինուած է ճանապար-հին վրայ քարաշէն անցք մի, փայտէ յե-նարաններով և կողմակի քանի մի լուսա-մուտներով, բիսնիկ նման: Այս անցքիս մէջ խոնաութիւն և ցուրտը գերեզմանա-կան է:

Ելենովքա մեծ աւան մ'է, բնակիչները Մոլոքան, օղը աշնանային. այլ կ'երեւի որ գեղացիք լաւ վիճակի մէջ էին. ընդարձակ մշակուած ցորենի արտերը և անցեալ տա-րուան մեծամեծ ցորենի բարդերը, և գոհ կերպարանք նոցա մշակներուն, կերպով մի կը մեղմեն ազգային մոռածոյ փիլիսոփայից աքսորական վիճակը: Սոցա շրջապատող զիրքը շատ լաւ է. լեռները ամփիթատե-րաձև կը հեռանան, Սեանայ լիճը ու Հա-րաւային արեւմտեան հորիզոնն՝ այս տեղին մեծավայելուչ տեսք մի կ'ընծայեն:

Ելենովքայէ անդին, 'ի ճանապարհին դէպ յ[խ]թի հանգույցը, Սեանայ ծովը կը ծածկուի յաջաց. դիրքը տակաւ կը ցած-նայ մինչև Ելենուտ. և Երասխայ հարուստ հովիտն մինչև ց[խ]արատայ ստորտը՝ ծած-կուած է բուսոց ճոխ կապերտով:

Երեկոյն մօտենալու վրայ էր. այլ ինձ անհրաժեշտ էր գեւե ևս՝ առն'լու երկու ըն-թաղք: Առաջինը մինչև Ախթիի հանգույցը, որ ճոխ և մեծատարած գեղ մի է թաթա-րաց, ուր շատ Մոլոքանք և մասամբ Հալք ևս կը բնակին: Երկրորդ ճանապարհն ար-տուկի կ'իյնար, դէպ 'ի յաջ, լեռանց ծաւ-կներու մէջ, ուր հովը ելած էին Երեւանու Գուաւապետի և այլ գաւառին պաշտօ-նեայք: Այդ հովոց տեղին էր լեռանց մէջ ձոր մի, հին Հայոց գեղ, Ծաղկոցաձորն:

Շատ պատճառներ ունէի այդ դիւղը եր-թալու. Գլխաւորաբար՝ Գաւառապետին Շալիքովի գործակցութիւնը և խորհուրդն առնելու, և հետո բերած նամակներս յան-ձնելու իրեն, 'ի Նովիչքովէ, յեսնգովքեայ և 'ի Ստեփնիքովէ... կը յուսայի ստանալ 'ի Շալիքովէ պաշտօնական հրամանագիր մի առ տեղացի պաշտօնատիրաւ, 'ի գործա-կցութիւն մտրեա մէջ գրած ծրարիրս գլխաւ-ւորելուն, որոյ յանդգնաբար ձեռք զարկած էի, առանց գիտնալու. թէ ինչ կը սպասէ ինձ: Ի 4 Օգոստոսի, յերեկոյի պահուն հա-սի 'ի Զորն ծաղկանց,

1 Օրագրութիւն հնագիտական վաստակոյ, զոր գրած է Փոլեաքով, 1879:

է

Ծաղկունեաց ծոր (Տարաչիչակ)։

Ծաղկունեաց ձորն՝ ամարանոց է Երեւնու պաշտօնակալաց, լեռներու մէջ, դէպ 'ի յաջ թղթատարի ճանապարհէն՝ եօթն վերստ հեռաւորութեամբ, յԵրեւանէ 50 վերստ։ Այս գեղեցկադիր ագնուականաց ամարանոցին օդոյն շահեկանութեան ե. բարեխառնութեան զլիաւոր երկու պատճառներ կան։

Առաջին՝ որ Ծաղկածոր քանի մի հազար ոտք ծովուն երեսէն բարձր լեռանց վրայ է, որով Երեւնու հաւարակածի ջերմութիւնը կը բարեխառնի, զի յԵրեւան ամառը տաքութիւնը ըստ Սէօմիւրի 58° կը հասնի, ե ինչպէս օդը՝ նոյնպէս ե այլ կենաց հանգամանք մահաբեր կը լինին, ե անթիւանհամար մերկ աշաց անտեսանելի մուկներ իր թունաւորեն 'ի գիշերի նոյն իսկ տեղացի տոկուն ե սովորեալ ընակիչները, որոնք կամ գործոյ պատճառաւ կամ յաղաթառութենէ ստիպեալ, հարկ է որ մնան տմառը այդ դժուարին մէջ, իրկորդք՝ այնպիսի մի շահեկան գիրք ունի Ծաղկածոր, որ մարդս ազատելով լեռանց բարձրութեան վրայ Երեւանու գոծիստիպալ ջերմութիւնէ, չի զգար այդ բարձրութեան վրայ աշնանային ցուրտին ե քամին, որք կը տիրեն Սեանայ լճին չրճակայքը. զի 'ի հիւսիսէ կը պաշտպանեն զնա բարձր գօտիք Ալակէօզ (Սրաքած) նշանաւոր լեռին, որ հսկայադիտակ պատ մի կը ձևացընէ Ծաղկածորի հիւսիսակողմէն. այլ յարեանից ե 'ի հարաւոյ կողմանէ կը ջերմացընէ զնա նոյն արեգակըն որ յԵրեւան մահաբեր է, իսկ հօս քանի մի հազար ոտք բարձրութեան վրայ՝ հիշտական։

Այս պատճառաւ ահա հօս 'ի հով կ'երենեն Երեւանու պաշտօնավարք, որք ստիպուած են աշխատելու ամառն տարին, չարագրելու ե ստորագրելու թղթեր։ Այս կերպով Ծաղկածոր գարձած եղած է հովոց ե գիւղագնացութեան տեղի Երեւնու բաներուն մարդկան։

Այնքոյլ Ծաղկածոր գրեաթէ երկայնա նիստ փողոց մի է լեռան մի դարին վրայ, որոյ երկու կողմը ճերմակ ճերմակ տնակ-

ներ կը զարդարեն, որոց շատը Մուրքանեւրու են, զի Երեւանու տարսիկակ հովոցին տիրող տարրք նորա են։ Այդ ճերմակ տանց մէջ կը բնակին ամառները Երեւանցի պաշտօնատէրք։ Երբ այդ գեղացուց աւանը կը մտնեն՝ կարգէ դուրս բան մի կ'երեւի՝ երբ հանդիպէ ոչ գեղացի կերպարանաց ե տարապուց. վայելատեսիլ տիկնայք ե օրիորդք նորաձե գգեստներով շքեղագգեստ երեխայք հարուստ ծնողաց, գայեալք ե վարժուհիք հետերին, (գաւառին առեւծամայրք ե մոտադերամ աղանեալք), սպայք ե զօրավարք, օստիկանք ե գինուղք, սպիտակ լայն գգեստներ հագուած. անմիջապէս սոցա քովէն Մուրքանք Մոսկուայի կապաներով ե կարմիր շապկներով. նոցա կանայք մաքուր շրջագգեստներով, մէջքերին սպիտակ սիւստանիլ, կոկիկ հագուստով իբրեւ թէ գայեալք կամ քաղաքացի օրիորդք լինէին. հօն կը տեսնեն շայկը ե ծաթարները իւրեանց տարադիւ. նոյն ե թաթար կանայք, զլուխին ֆէս զարդարուն, կարմիր վարտեօք, գոյնզգոյն ե խառտուտիկ հալաւներով, վրաններով ե այլ վայրենաբնակ ձեւերով, գեղանի գիւղապատկեր մի կը ձեւացընէին։

Մտնելով 'ի Ծաղկոցաց Ձոր, երբ բարձրացանք, փողոցին կէտը, զի դարու վեր է ճանապարհը, կառավարս ձիւրը կեցուց։

— Ինչո՞ւ կեցար, հարցուցի։

— Թող շուշ առնուն ձիւրը, պատասխանեց. Ալակէօզի ելքին նման գոծուորելանելի է փողոցս։

— Միթէ Ալակէօզ շատ դարձկն է։

— Ի՞նչպէս չէ։

— Բարձր է։

— Շատ բարձր։

— Արարատի չափ կայ։

— Մեր թաթարք դարձաւ երեսս նայեցաւ։

— Արարատի չափ. կարելի բան է. Արարատ բարձրաբերձ լեւ մի է, իսկ Ալակէօզ ցած։

— Կարելի է ելնել Ալակէօզի վրայ։

— Կարելի է։

— Արարատայ վրայ։

— Ոչ. կարելի բան չէ։

Մասնաւոր դիտմամբ այս խօսակցութիւն բացի Կանիաւ գիւղէի որ ինչպէս

տեղացի Մսիման-Թաթարը՝ նոյն և Հայք հաստատուպէս համոզուած են, որ Արարատայ գլուխը ելնելը անկարելի բան է. զի քրիստոնէից Աստուածն, նոյն և Ալլահ, արգիլած են այդ ճանապարհը. և այն յանգուզն ձեռնորդէց, որք անունկնդիր լինելով այս աստուածասաստ հրամանին, փորձ կը փորձեն սրբազան լիբանս գլուխ ելնելու, ահաւոր մահով կը կնքեն կեանքերնին:

— Ի՞նչ պատճառաւ կարելի չէ Արարատայ վրայ ելնելը, կրկին հարցուցի:

— Աստուած արգիլած է:

— Միթէ քիչ բան կայ որ Աստուած արգիլած է, այլ մարդիկ կ'անեն:

— Այնպէս չէ, այս անկարելի բան է. Անգլիացի մի փորձեց մեքենայով բարձրանալ լիբանս ծայրը. ելաւ կէս ճամբան. Աստուած այնպիսի մեծ քամի գրկեց, որ թռուց տարաւ ՂԱՅգլիացին. կորստ գնաց:

— Շատ վախնալու բան:

— Ուրիշ Գալլիայի մ'այլ արկղիկով թռաւ Արարատայ վրայ. մեծ քամին արկղիկով 'ի միասին զԳալլիացին բռնց տարաւ. ոչ զքիտէ ինչ եղաւ. կորաւ փռանկը:

Ի Ծաղկոցածոր պանդոկ լիջայ, Այս պանդոկի գրուցածս՝ կէս արեւելեան ձեռով չէնք մի է, յարդով ծածկած, սենեակներուն չգիտեմ ինչ անուն տալու է, ճիշտ կը լինի եթէ հիւզ ասեմ. որոնք թուով երկուք և կէս էին, և ահա այդ կէս հիւղը ինձ վրեժակեցաւ: Զըուցեցի որ ինձ համար ձուաղեղ մի պատրաստեն՝ զի ուշ էր ժամանակը. պատուհանին մէջ նստած կերայ այդ փառաւոր կերակուրը, զի սեղանին առաջ կարելի չէր:

Անցագիրս ուղղւելն որ օստիկանին ցոյց տան. նա ևս 'ի ճով ելած էր: Հպատակեցայ օրինաց, առաւօտ ես ինքս ևս գնացի ներկայանալու նմա, սր շատ սիրելի և համբոյր մարդ երեցաւ, որպէս զի նորա հետ երթամ գումառապետին:

Այնպէս ևս արարինք:

Գաւառապետն այնպէս բնորոշեցաւ զիս՝ ինչպէս որ մտքէս կ'անցընէի. վասն զի նորա բարի համբաւը կանխաւ լսած էի, ինչպէս Գաւառապետն և բարի մարդ:

Լաւ ընդունելութեան անշուշտ օժանդակ եղան հետո բերած նամակներս. գաւայն առանց անոնց՝ նա շատ ավորժեւի,

պարզ և համակրու թեան արժանաւոր անձն մի է:

Ճանապարհին նպատակին վրայ ևս խօսք բացուեցաւ. բարի զօրավարը ցրցուց լիակատար պատրաստականութիւն, ինչպէս հրամանատար հրկրին՝ ձեռքէն եկածը առնելու, յանձնարարութիւններ տալով Արարատայ մօտ պաշտօնատեարց, գործակից լինելու ինձ ըստ ամենայնի, որ յաջող ելք ունենայ ճանապարհորդութիւնս, տալ փորձառաջնորդներ և պահպաններ, ցուցնել այն ձերբը, որք թերեւ յիշեն թէ ինչ միջոցներով 1851ին ելած էր Արարատայ վրայ Խոճքոյ, ընդ ՊՊ. Խանդերովի, Ալեքսանդրովի, Մարիցի, Ուսլարի, Շարոյանի, 60 զինուորներով և խազախներով:

— Ահա որ ինչ իմ ձեռքէս կու գայ, աւելցուց նա. այլ ելքը մերձաւորապէս կարգադրել և տրամադրել ձեր գործն է:

— Հարկաւ. մեծապէս շնորհակալ եմ. Սակայն ես կը յուսամ, որ թերեւ դաժնուն Արարատայ մօտ ինձ բաղդակից լինելու փափաքողներ. որոյ հասնելն, կ'ասեն, որ առանց վտանգի չլինիր:

— Որո՞յ վրայ յոյս ունիք:

— Ունիմ հնաւ նամակ Նովիցիի զօրավարէն, Նիկոլա Գլանինթեվիչէն առ իւր մտերիմն և դասակից զինուորական ակադեմիային, զօրապետ Նեվերովին:

— Ահ հրամանատարն Ումանեան խազախաց զօրքին՝ որ յԱրարլիս կը բանակի:

— Այո, առ նա:

— Այլ գժաղգաբար չես գտներ զնա յԱրարլիս:

— Ուր է:

— Առ ժամա պաշտօնէն հրաժարելով՝ Փաթիլգորդի հանքային ջրերը գնացած է նա:

— Մեղք. նորա վրայ մեծ յոյս ունէի:

— Բայց դուք կրնաք դիմելու Առաքելեան զօրապետին, որ փոխանակ է Նեվերովի, դա բարի և յարգելի ձերուցի մի է, շատ մարդասէր. ան ձեզ համար ամէն կարելին կ'առնէ... իմ ողջոյնս կը շնորհէք իրեն:

— Շնորհակալ եմ, ձեր խորհրդով զօրձելով, յոյս ունիմ որ...

— Լաւ միտքս եկաւ... քիչ մնաց որ մուսանայի, աւելցուց զօրավարը. այժմ 'ի Ծաղկոցածոր կը գտնուի Սուրմալը նահանգ:

գին կառավարը Պ. Կօկչայեվ. քանի մ'օրուան համար աղգակնաց մօտ եկած է։ Նա ձեզ համար ամենօգտակար մարդ կարող է լինել։ Արարատ նորա նահանգին կամ բաժնին մէջ է. նորա միջոցաւ պէտք է լինի մենայն ինչ։ Հիմա գրկեն՝ նորա և տւեն։ Հօս կը խօսինք, թէ ինչ պէտք է առնելու յօգուտ ձեր առաջի եղեալ գործոյն։ Այդ ինձ համար նոր գիւտ էր, լաւագոյն պահանջ մի չէի կարող ունենալ։

Զօրավարը հրամայեց որ կանչեն շուտով այդ անձը. քանի մի վայրկենէն Սուրմալիի կառավարը մեր հետ էր։ Նա եղաւ իմ ոգին բարերար, այլ ոչ նորա և ոչ իմ մտքէս փանցէր՝ ինչ որ պատրաստուած էր ինձ համար։ Ինձ կը սպասէր անհնարին վշտառութիւն և այնպիսի տխուր կատարած, որ բոլոր կենացս մէջ կարելի չէ մոռնալ։ Այլ ինչ հարկ կայ ապագային վրայ խօսելու...

Գաւառապետին կոչին ուկնդիր՝ Սուրմալիի նահանգին կառավարին՝ Նիկողա Պետրովիչ Կօկչայեվ շատ լաւ տպաւորութիւն գործեց վրաս։ Նա տւեց զուտ աւրիւնային տիպար հարաւարեակ մարդու. թուի՝ այլ գեղեցիկ կերպարանքով, կենդանի և փայլուն սև աչքերով։

Գործոյս էութիւնը լսելով, ըստ երևուածին մեծ ուրախութեամբ ընդունեցաւ Գաւառապետին առաջարկութիւնը։ Նա ինքն ի վաղուց կը փափաքէր փորձելու իւր բաղդը՝ երկն սրբազան լեռան ծայրը, այլ չուներ առիթ, չուներ ընկեր, թէպէտ և Սուրմալի միւս նորա սենեկին պատուհանէն առնալ կը նայէր. զի սորա տունը յիգդիրի մէջ է, անմիջապէս Արարատոյ ստորոտին վրայ։ Նա ինձ խօստացաւ. ի միասին կատարելու զեւր ի ծայր պատմական սրբավայրին, որ արդէն իբր կանխակալ գաղտնի արմատներ ձգած էին հողոյս մէջ, երևակայութիւնս առցեցած էր, քունը աչքէս հատած։

— Ես ինքս անձամբ, իմ ձեռքերով, կը վերցընեմ կը դնեմ՝ գիւտիւնէ Լուկիչ Արարատայ սպառուածին վրայ։ Այսպէս ասաց Պ. Կօկչայեվ։

Յետոյ Գաւառապետը հրամայեց պատրաստել ինձ համար յանձնարարական թուղթ, յորում գրուած էր, « հրաման է հանդուսներուն վերակացուաց նահանգիս

պահակաց ի Մարդկոցաց-Ձորէ երևանոս գաւառին ումէն կողմ, զայս կրողին (այսինքն ինձ) տող ամէն տեղէ, առանց արգելքի, անձնապահ ձիաւորներ, նահանգին պահակներէն և առ հասարակ ամենայն օրինաւոր գործակցութիւն ցուցնել իրեն »։

Կէս օրէն վերջ ծամը երկուքին ճաշի հրախիտեց Գաւառապետը զիս և զՊ. Կօկչայեվը, որ վերջնական որոշողութիւնը առնենք մեր ճանապարհին մասին։

Առ ծամանակ մի բաժնուելով սիրելի տանտէտեանէն, եղաւ Մարդկոցացձորի մէջ աստանդական պտուտելու և զննելու հրաւանդ մնացորդներ այդ հետաքննի տեղոյն, Գաւառապետին տան ճիւղ գիմաց։

Ամէն բանէ առաջ աչքիս զարկաւ կիսաւոր աշտարակ մի, որոյ ամրակալու ալբրտայց միայն մի մասն կանգուն էր զրոհ նստեղերով և պատուհանատեղերով։ Գռնէն ներս մտայ, — շիտակը զուրցնելով, դուռն չէր, այլ ահագին խրամատ մի, որ կարծես բռնմբերու և մանգղիմնեբու հարուածով բացուած էր։ Թերևս այնպէս ևս եղած լինի, զի մերձեցուցած են համայնաժախ մանգղիմնք իրենց ձեռքերը առ պատմական հնութիւնս երբեմն փառաբերիւ և ծաղկեալ Հայաստանի, որ ինչպէս անկախ տէրութիւն՝ քաջապէս պատերազմած է երբեմն ընդ թշնամիս։ Դժուարութեամբ քարերուն, դերբուկներուն վրայէն մտայ դռնէն ներս, որ ի վաղուց կորուսած էր կռանիտայ բարաւորները. երկուր գիտեցի կործանած շէնքին տխուր ներքսկողմը. դրան երկու կողմերը, դէպ յանկուծանքն՝ զեռ անկործան կեցած էին ոչ մեծ խորշեր գրուաթեալ կոփածոյ կռանիտով, խորշերէն դէպ ի պատերուն մէջ ծակի կ'երևային, որոնք ոչ պահաւին և ոչ խողովալ կ'ի կը նմանէին։ Կիտաւեր պատուհաններն այնպէս կ'երևան որ իբր շորացեալ գանկի վրայ աչաց խորշեր լինէին։ Սոցա կռանիտայ կոփածոյ բարաւորները կամ շրջանակները զեռ կեցած են, այլ սատարիկ կերուած օգէն և ծամանակէն։ Այնքով մնացած է ներսի փողբիկ դուռը դէմ ընդ դէմ արտաքին մեծ դրան, այլ ուր կը հառնէր այդ դուռը, այդ առ այժմ գաղտնիք մի է ծամանակին և աւերման։

Այ հեռի աշտարակէս, դէպ ի վեր ի

լեռան, կան մեծագոյն աւերակներ եկեղեցեաց, Այս չէնքիրը, չէսյիլով որ սաստիկ կերուած մաշուած են ժամանակէն և կէս 'ի կէս քանդուած, ցարդ կը վկայեն բարձրագոյն աստիճանի արուեստին կատարելագործութեան, յորում Հասած էր ճարտարապետութիւնն Հայոց թագաւորութեան: Ի՞նչ կոկոթիւն, գեղեցկութիւն, նրբութիւն գործուածքի, ի՞նչ մեծագործութիւն և տեսք ամբողջութեան մէջ: Չախակողմեան իկեղեցին կամ մատուռը կանգուն է, միայն կոնսաձէ կաթողիկէն և աշտարակը կիսակործան են. սակայն 'ի վերայ այսոր ամենայնի շատ գեղեցիկ չէնք է, մանաւանդ այն պատուհանի տեղ նորը խորշաձեերը պատերուն մէջ: Փոքր, միջին իկեղեցի՝ կոնսր միայն մնացած է, այլ նոյնպէս կարգէ դուրս գեղեցիկ, Հուսկ' աջակողմեան չէնքը գլխաւոր կամ թերեւս մայր և կեղեցին, թէպէտ քանգած կործանած, այլ իւր հոյակապ յօրինուածով և գեղով կը զարմացնէ զտեսնողը: Մասնաւորապէս մեծագործ է մեծ և կիսակործան կաթուղիկէն այդ չէնքին:

Երկար ժամանակ խոր մտածութեանց մէջ ընկղմած թափառեցայ այդ Հին թագաւորութեան գեղեցիկ մնացորդաց մէջ, որ այժմ քաղաքականապէս մեռած է, այդ աւերակաց նման. քամիով կործանած են խաչերը, ընդ մէջ չըլլած են կաթողիկէք և պարիսպք. տափաձէ գերեզմանաբաք ընդ մէջ խորտակած և չէնքիրուն քիւք կամ չըլանակք թափած թափթրիւնք: Եկեղեցեաց չորս պոռոյտն, բակին մէջ պատերէն դուրս և ներս, ամէն տեղ գերեզմանք և խաչքարինք, հայերէն ցցուն տառերով, որք կարծես ցեցակիր եղած են ժամանակէն, օղէն և արեւն, զի սորա ամէնը զօրաւոր միջնորդք են կործանման և կենաց:

Նոյն իսկ կենքն ի՞նչ է, եթէ ոչ յոր քանդուում: Եւ ի՞նչ այդ քանդուում, եթէ ոչ կենքը հանապաղ և յաւիտենական լեռանք և մահ՝ հարազատ քորք են միմեանց, երկուորեանք: Մահը կու տայ կենքը, այլ ոչ մոռնոյն. իսկ կենքը՝ մահ՝ տալու, կամաց կամաց մեռեցութիւն վասն կենդանոյն: Սերակացս հանդիպակաց կարգաւ կեցած գերեզմանաբաք, Հին հայերէն վերտառութեամբ, նոյնպէս ժամանակէ մաշուած, նմանութիւն կը բերին

կանգուն մեռելոց, որք իրրթէ խօսէին իրենց անցեալ զօրութեան և երջանկութեան վրայ: Դուրսը դարձեալ նոյն գերեզմանաքարք խաչերով և վերտառութեամբ. և այդ ամէնը մահ կը գտնեն և կործանումն յաւիտենական. անուններուն շատերը աւրուած են. նոցա գործերը մոռցուած, ինչպէս որ կը մոռցուի յիշատակը երբեմն փառաւոր և աղատն երկրին... Այլ աւհա դեռ անմուշ է նոր տապալանքար մի պորփիրեայ. և Աստ Հանգչի Նիխոր փոխազօրապետին ցովանկու Մկրտչեան Պոպրեանով. ծնեալ յամի 1801. վախճանեալ յամի 1873 'ի 22 յուլիսի ք. վարը հայերէն գրուած: Ահա այս քարին վրայ ևս կան փորագրուած երկու սրտաճմիկ խօսք միայն և Մեր Նշանին ք. Նշան՝ սիրելի անուն է յանդերկովկասու մէջ:

Ամէն կողմ՝ ուր ոտք կը կոխեն, ուր աչք կը տեսնեն, բովանդակ մահ է և կործանում, և նոցա քով մերձ՝ կենք և կենդանութիւն. պատերուն ճեղքերուն մէջ կանաչներ բուսած են, ծաղիկք գլուխին կ'երկնջընեն, բոլոր բակը և գերեզմանի Հին քարեր ծածկուած են կանաչով. բիւրաւոր մողէգներ կը սողան քարանց վրայ, չէնքերուն ցցունազարդ չըջանակներուն, այլ և հարթ հաւասար պատերուն վրայ. և այդ ամէնը կ'ապրի, կը տաքնայ արեւով, և կը ծածկուի դալարին մէջ: Մեծ չէնքին բարձր ծայրը, կաթողիկէին մէջ, ուրուր մի բոյն դրած է, ուր կը ճըւան ծագերը. սոքա օր մի պիտի կարճեն յորեւոր խայտաւոր մողէգներուն արեւը. որք այժմ կ'ենտակից բնակիչք են գերեզմանատանն. Եկեղեցեացս չորս կողմի պատը, նոյն իսկ գերեզմանք, նկարէն քանդակուած չըլանակներու կտորներով, խաչքարերու հատուածներով շինուած են. այս աւերակներու իրենք դիրքնք կը պահպանեն, կը պաշտպանեն ինչ որ գեռ 'ի փոշի լուծուած չէ, ինչ որ ել կրքանք եղած չէ... Բակարանէս դուրս մնացած գերեզմանաբարանց վրայէն, ճուրադ արհեստի ընկած նկարաքանդակ չըլանակներու բնկորներուն վրայէն՝ կռահիտէ փորուած խաչքարանց վրայէն կը ճոռչեն սայլերուն անիւներն, որք 'ի լեռան 'ի վեր կ'երթան:

Մեռած Հանդարտութիւն է չորս դին. երբեմն լեռնային հովը փախսոց մի կը հանէ

չորացած խոտերէն, իրր թէ փսփսար խոտը, այնպէս որ մարդ ականաց կը դառնայ կը նայի շիթած կերպով՝ թէ չկայ արդեօք կենդանի խօտուն մի... Այլ ոչ ոք չկայ... խօսողը հովիկն է չոր խոտին հետ, և արեւը խաղալով կ'անդրադառնայ տափուկ գերեզմանաքարին վրայ. այդ այն արեւն է, որ երբիմի կը լուսաւորէր զՆայաս տուն. այդ այն արեւն է որ կը կենդանացընէ և կ'աճեցընէ զամենայն նոր, և քանդելով կ'եղծէ զմեռածը, իբրեւ աւելորդ ինչ և ոչ մէկու մի պիտանացու:

Աւերակներէն 'ի պանդոկ դառնալով, ճանապարհին՝ աղմկալից և բազմազունեան խռանի մի հանգիպեցայ, որ լցուած 'ի Դադկունեաց Զոր՝ կը գոչէին կ'երգէին այլ և այլ ձևերով: Արեւելեայինն ձայնը ձգած կ'երգէր

Ա՛հ, բռնեցէք սփի սերբ,
Քիչ ևն նոքա 'ի կեանքս մեր:

Մոլորեան երիտասարդը կարմիր շապիկներով և սև կիսաթաւիչ վարտեօք, խուճի խուճի կայնած, բարձրամայն կը խնտան հարթած առսի մի վրայ, որ գօտէմարտակի ձեռով կայնած կը հայչոյէ:

— Անիծեալ Մոլորեանք, անիծից արմատք. որոյ երթամ գանգատիմ:

Մոլորեանք խնտալները կը բարձրացընեն, որով աւելի կը գրգռեն զուսը:

— Բըշ, բըշ, զնացէք ձեր ժողովքին, անիծեալ Մոլորեաններ, գրնացէք 'ի ժողով: Լուսեցաւ և զուտարեւելան բացագանջութիւն. « Այլա՛հ, ի՛յալ Այլա՛հ... »

Այդ խառնածայն ամբոխին մէջէն որոշ կը լսուէր մոլորեան կնոջ մի սուր ձայնը.

— Օննի՛կ, ա՛ Օննի՛կ, չըշեցիր, չըշեցիր չհեռացուցիր ցուր...

Ի Պանդոկին, իմ սննկիս (այսինքն հիւզիս) մէջ՝ գտայ սեպեայ աղջիկներ, հայուհիք, ազգականք հայ պանդոկապետին: Սոքա թուղթ կը խաղային չրի գարնիչ, լսեցի որ չորի բազորին՝ չորի շան սնունը կու տային. — Դա՛հ, — Պարսկաստան հեռու չլինիլ կ'իմացու էր:

Այս աղջկունք յԱրեւան Սթանուլիի տիկնոջ վարժարանը կը սորվէին. այս տիկինը ոչ թէ միայն Ռուսաց և Հայոց մէջ մեծայարգ է, այլ նոյն իսկ Մսլիմանք հաւատալով նմա՝ կու տան իրենց աղջկունք կրթութեան:

Աղջկունք չփանալով որ ռուսերէն կարգալ գիտեն, դասական գիրք մի մէջ բերելով, ամենէն փոքրագոյնը սկսաւ համարձակ արտասանել.

Ագռաւ Թըռաւ դէպ այլ ագռաւ,
« Ագռաւ ագռաւ, անոր բառ... »
» Այս օր ուր բեղ ճաշեք պիտի,
» Այդոր վերայ խօսել պիտի... »

» Ագռաւ, շատ տխրածաւուր հնչեց ականջիս այդ բառը:

Գաւառապետին տուն ճաշէն վերջ, իսկոյն պատրաստութիւն տեսայ ճանապարհի: Այլ 'ի Դադկունեաց Զորէ մեկնեցայ՝ երբ օրը տարածամեծու վրայ էր. վառն գի 'ի Դադկունեաց Զոր չկայ փոստի կայարան. անոր համար հարկ եղաւ մասնաւոր մարդ զրկելու յԱթի:

Մանգաղն (մահիկ) նոր լուսնին պայծառ տպուած էր պարզ երկնից վրայ, անմիջապէս գիշերավար աստիղ ներքև:

Ես 'ի խոր սրտիս կը զգայի՝ որ իմ չորս կողմն պատած է բանաստեղծական, պատառատուն, պարզ, թէպէտ և կարկատուն, զուարթ և համակրելի Արեւելք. թէպէտ կը վախցընէ զմեզ իւր ժանտախտներով, տենդերով, քոլերաներով, և այլ տեսակ ախտերով: Անիւնիւր քարերուն վրայէն անցած միջոց, կարծես փշաքս վրայէն կ'անցնէին: Երբեմն կը հանդիպէինք այլանդակ սայլերուն, լծուած անարդիլ գոմէշներով: Շատ սուր հնչեց տկանջիս կառավարիս ձայնը, « ա՛վարդա... »

Քողորմիկն մոռթ էր, երբ հասաւ հանգուցը, թէպէտ և ունէի իրաւունք Գաւառապետին յանձնարարական թղթին զօրութեամբ՝ անձնապահագաններ, զինուորեալ ծիաւորներ պահանջել. այլ որոշիցի անցընելու հարաւային գիշերուան մոռթ՝ հանգուցին մէջ, որպէս զի առաւօտեան լուսով լաւ տեսնեմ ճանապարհը, որ կը տանէր առ մտադրեալ նպատակս:

— Դու երէկ, ինձ հետ 'ի Դադկունեաց Զոր գնացիր, ետևէս ձայն մի կ'ասէր:

Նայեցայ մոռթին մէջ, տեսայ ծանօթ և բարեխիտ կերպարանքը: Այդ այն ընտելացած վարիներն էր, որ երէկ ինձ պատմել էր թէ ինչպէս Անգլիացի մի մեքենայով և Փրանկ մի արկղիկով ելան Արարատ, և քամին քշեց տարաւ զնոսա չի գիտցուի ուր:

— Այո, ես այն եմ, բարեկամ, ուրախու-
թեամբ պատասխան տուի վայրենւոյն: Երբ
մարդ միակ կը թափառի ունձանօթ տե-
ղուանք, ամենայն բարի կերպարանք ու-
րախութիւն կը պատճառեն:

— Հայ, սա գոմէշն է, լսեցի մթան մէջ
այլ ձայն մի:

— Գոմէշ, ես գոմէշ, հանդարտութեամբ
պատասխանեց իմ վայրենի-բարեկամս:

Մութ տեղ, հանգուցին բարձրաւունգա-
կին վրայ նշմարեցի թուի կերպարանք
մի, որ սպիտակ հագուած էր կրկնոցին
տակէն: Արտասանութենէն իմացայ որ
Ռուս էր:

— Գոմէշ, քաշէ տար արկղը:

Գոմէշը հանդարտութեամբ իջեցնելով
արկղը կառքէն՝ սանդուղներուն վրայ
կոթնցուց:

— Բարեկամք, առէք իմ բաներս ևս,
հրամայեցի և ես:

— Տէր, դուք գիշերօթել կամիք, հարցուց
քաջին մէկը, գլխարկը գլուխը, որոյ մեծու-
թիւնը խաբէ գմբեթին չափ կար:

— Այո, կը մնամ գիշերս:

— Շնորհակալ եմ. ձերն ևս բան կե-
րած չեն:

— Ուրեմն՝ ի միասին կ'անցընենք գիշերս,
ասաց սպիտակազգեստն:

— Շատ բարի:

— Ո՛ր կը հաճիք զնալ:

— Յերևան:

— Իսկ ես յերևանէ և յիկդիլէ:

Յայտնուեցաւ որ սա իկդիլի թղթատան
վերակացուն էր, որ ունի պաշտօնով՝ ի Գա-
րագիլիսէ կ'երթար: — Ներս մտաւ այլ ուն:

— Ո՛ր բարով, կնքահայր:

— Ի Գարագիլիսէ:

Սոքա երկու հին բարեկամք էին. ներս
մտնողը Անգլիացի-Հնդկի կամ Հնդկի-Նե-
րոպացի հեռագրագծին վերակացուն, իսկ
սպիտակազգեստը հօս կը ծառայէր ա-
ռաջ: Խօսեւ սկսանք. սկսան հարցընել ո՛ր
և ինչո՞ւ կ'երթար: Հարկ եղաւ պատմել,
խառ արմնցան:

— Այդ Անգլիացուց գործ է, ասաց հե-
ռագրապետը: — Նորերս եկաւ Արարատ
տեանելու ծանօթ անգլիացի ճանապարհ-
հորդ մի:

— Ո՛ր ճանապարհորդը:

— Լորդ Իչեստեր. Մայիսի մէջ Հնդկ-

կատանէն Գուրէմի վրայէն եկաւ, ինձ
հեռագիր զրկած էր: Գեռ երիտասարդ մի
է, կ'երեկ որ շատ հարուստ է, շիտակ ՚ի
Լոնտրա գնաց: Յուլիսի մէջ Նորէն եկաւ
անցաւ այլ Լորդի հետ ՚ի միասին, սա բո-
լորովին երիտասարդ, ընչացք անգամ՝ գեռ
չունէր... Գարձեալ Արարատ գնացին... Չմի-
ձանձրոնար սպգ մարդիկ աստանդուկան
կեսանքէ:

Շուտով գնացին բարեկամքն, ես պառ-
կեցայ քնանալու: Խեղքս Արարատայ տը-
ւած՝ քուն եղայ... ո՛հ վաղը, վաղ առտու
պիտի տեսնէի զԱյրարատ:

է

Արարատայ դիմաց:

Գիշեր է թէ առտուտ: — Չեմ կարող
հասկընալ: — Այնպէս կ'երեկ որ առաւօտ
է. դուրսը աղօտ լոյս մի կ'երեկ: Ո՛ր եմ
եմ: — Կը յիշեմ որ ՚ի Ծաղկունեաց-Չորն
եմ: Բոլոր գիշերը անբաժան մնաց ուղեղիս
մի անկիւնը և ջղացս վրայ տպաւորած մե-
ղեղի մի գեղեցիկ չափով գրուած:

Նոցա արնեը բուռն հովեր քանդեցին:

Եւ արօքներ գերեզմանները բացին:

Համայնածախ բոցով Ժանգին լափեցան:

Նոցա զորահը զէնք սողաւարտք մարտական:

Այս Ծաղկունեաց Չորոյ երգն է. մեղե-
ղի մահու: Այլեւս չեմ ՚ի Ծաղկունեաց Չոր
երէկ մեկնեցայ անտի, գիշերս յԱյրթի
անցնելու. այսօր պիտի տեսնեմ զայն՝ որոյ
՚ի վաղուց կը ձկտըր միտքս:

«Համալսարհի կրօնական յարգութիւնն
առ Արարատ, մարդկան ազգի հնաւանդ
պատմութեան յարակից է. նա հաստա-
տուած է աւանգութեամբ, որք ունին ան-
ընդդիմանալի և խորին նշանակութիւն, որ
և հասած է առ մեզ մարդկային կենաց
երկար շարքով և աւանդուած մեզ իբր ան-
որալ յիշատակութիւն մանկութեան, մեր
գոյութեան սկզբան վրայ. այդոր ձեռք մեր-
ձեցընելը՝ հաւասար է մարդուս սրբազան
կոչածը պղծելուն: Նոյնպէս մենք աւելորդ
կը համարինք քննել և բացատրել, թէ ու-
նի հաստատուն հիմն այն կրօնական համո-
ղումն որ տիրած է ՚ի Հայաստան, թէ ան-
կարելի է ելնելը՝ սրբազան լերին ծայրը »:

Այսպէս կ'ասէ ակաճառոր Արիս գիտնականն¹, որ երեք անգամ փորձած է ելնել այդ հաւաքը ընտան վրայ, և չէ հասած նորա խորհրդաւոր գաղաթը, կամ ահռելի փութորկաց և ահաւոր կայծականց պատճառաւ, (դի Ալլահ զրից յանդուգն մահկանացութիւն իւր փոթորկալից շուշը, և կամ սրտմտեալն իհրաւր ժամ հանց կայծակնեւրը, զղրգըլով զհիմունս երկրի) . կամ այն պատճառաւ՝ որ խոր ձիւները, որ առկա խեղ իւր մնան ժայռերէն անդնդոց վրայ, կը սպառնային յինքնանս թաղել զձեռնեւրէցը:

Այլ 'ի 29 յուլիսի 1845ին փորձին միջոց, նա եղաւ Արարատայ անեւանի կարծուած ծայրը:

Սակայն պիտի ելնեմ արդեօք և ես:

Նոցա տըները բոլորն հովեր քանդեցին, եւ արօրներ գերեզմաններ բացին...

Որո՞ց « տըներ », որո՞ց « գերեզմաններ » . — Նոցա՞ որոց վրայ ես վերջի օրերս շատ մտածեցի. երկու թագաւորութեանց որք այժմ՝ չկան, Հայոց և Վրաց, որոց յիշատակարաններով լի են այս տեղուանք: Այդ պատմական յուշք անհանգիստ ըրին քունս, և կը ցնորէին ջիւր...

Ժամանակ է ճանապարհ ելնելու, շուտով լոյսն կը ծագէ:

Ելալ դուրս. հարաւային գիւղերը բոլոր աչքերով (աստղերով) ինձ կը նայէր. Արշալոյսը նոր նոր ծայր կու տար: Մթնալուսին՝ կակուղ կենսակիր բանի մի վրայ կու խեցի, որ վախով կամաց մի՛ կաղկանծեց: Այդ՝ շնիկն էր որ պահապան կեցած էր իմ քունս եղած միջոցս: « Ներէ շնիկ, աստղի, չտեսայ », նա սկսաւ քծնել. գիտեն նորա իրենց բանը. զճանապարհորդները իրենց տեսանց պէս կ'ընդունին: « Գնա՛, աստղի, գնա՛ խելօքս, արթնցուր կառավարները »: Գնաց, ման եկաւ կայնած տեղւոյն վրայ, և չգիտնալով որ ինչ ընէ, սկսաւ քերուել տիւր:

Արթընցան՝ ելան կառավարները: Կառք մի մօտեցաւ հանգուցին սանգուզներուն, վար իլան կառքէն փաթթուած կերպարաններ, մօտեցան ինձ, բարեւ տուին: Խօսուածներէն իմացայ որ արեւելեան մար-

դիկ են: Սկսան զանազան հարցմունքներ.

— Ո՛ւր կ'երթաք:

— Յերեւան:

— Ո՛ւր տեղէ էք. ներեցէք հարցմունքներուս:

Ասացի. զարմացան որ այդչափ հեռաւոր տեղէ մարդ յերեւան կ'երթայ:

— Թիֆլիսէն երկաթի ճանապարհաւ եկաք, հարցուցին:

— Ոչ. փոստի կառքերով:

Նոր զարմացումն. բացատրեցի որ այն կողմն երկաթի ճանապարհ չկայ:

— Ի՛նչպէս չկայ. փոթի և Պազու կան:

Յայտնի էր որ սոցա համար ևս, ինչպէս Նիխային, դժուարին էր գիտնալը Ռուսաստանի դիրքը: Մեծաւ հետաքրքրութեամբ կը հարցընէին իմ ուղեորութեանս պատճառը: Զուգընով երկար չարշարել, ուղեցի շփոթել այս արեւելցի մարդիկը. զրուցեցի որ Արարատ կ'երթամ. և յիրաւի շփոթեցի:

— Արարատայ վրայ ելնելը անկարելի է, կը հաստատուին:

— Այլ ես կ'ուզեմ բազմ փորձելու:

— Տակաւին ոչ ոք ելած չէ:

— Ոչ. ելած են Բառուզ, Ալլահոմով-Աբասքի և Արիս:

— Գոցա անունները լսած չեմ... Այլ սոքա, Էնգելարդ և Աթուկանց փորձեցին, և երկուքն ևս անհետ կորան:

— Սոյն միջոցին լծուցաւ կառքս. ձիաւոր անձնապահապետ հնձեալ, յարեմալ արեւելեաց հետ, ի ճամբայ ելայ: Պայծառ երկնակամարին վրայ, ոչ փոքրիկ ամպ և ոչ շնչին չուք մի կ'երեւար. կուտի նման մաքուր էր: Աստղերը տակաւ՝ այլ զգալի կերպով կը մարէին կ'անցնէին: Իմ վրաս կամարածեւ երկինք հիանալու կու պուտակ գունով կը փայլէր, մութ գոծազմ, գէտ 'ի հորիզոն կը մեղմամար զոյնէ և անշուշտ օդն էր որ չէր կարենար 'ի մի յարիւ երկինք կապուտին հետ:

Յանկարծակի պայծառ անսովոր առարկայ մի ճեփ-ճերմակ գունով յերեւան եկաւ հորիզոնին կապուտին վրայ. ինչ էր այն. — Նա՛, ինքն էր Արարատ...: Հըմէցաւ սիրտս:

Շիտակ 'ի նա հայեցայ. նա՛ բարձրաբերձ հսկայն՝ ձիւնապատ գլխովն կեցած էր: Արագած ոչինչ է Արարատայ առջև, Ապլած և ահաբեկ նայուածքս չէի կարենար

¹ Լեւոնային օրագիր 1846. էջ 109-110.

տեճուկ վրայէն, Յիրաւի տնհասկնալի է, Աբրող ըն աի, բովանդակ ձիւնապատ տշխարհք մի կը կանգնի տուաջը հարիւր վերաստ հեռաւորութեամբ. շատ մեծ է այդ ույգ հողի և քարերու զանգուածը, որ ձիւնով ծածկուած՝ վեր երկնից կը մօտենայ, չնապարհորդն ույգ միտք և հողի ահարեկող երևոյթը կը դիտէ 6300 ոտք բարձրութեան վրայէ. այս դիրքը բարձր է Գատըր-դադի գագաթէն. չտեսնուած, չըզտեսնուած տեսարան:

Այս տեղոյն, ուստի կը դիտեմ այդ տեսարանը, զեռ միտք պատած է շրջապատը, արեւուն և ոչ նշան կայ. այլ դիմացէն լեւան ձիւնապատ գագաթը արեւն ոսկէգոյն կը ներկէ, և իւր նախնական ճառագայթները կը զրկէ սրածայր և ձիւնաթաղ Արագածի գագաթան:

« Դիմացս երկու հսկայադիտակ լեռներ հորիզոնին վրայ կը բարձրանան, (կ'ասէ Պ. Փոլենքով իւր հնագիտական յիշատակարանաց մէջ, պատմելով այն սպաւորութիւնն՝ որ նորա վրայ ներգործած էր Արարատայ երևոյթնայն տեղէն՝ ուստի հասցում տալին անգամ տեսայ զԱրարատ): Ստորոտը և մէջքը, սովորական այլ լեւանց պէս գորշ—գեղնադոյն է, այլ նոցա ձիւնաթաղ գագաթները վեր բարձրանալով երկնագոյն կը լինին, այնպէս որ տակաւ անկարելի կը լինի զանազանիւր թէ ո՛ր կը սպառի լեւանց գագաթը և ուստի կը սկսի երկնից կապուել:

« Այս երկու բարձանցս վրայ, այսինքն Մեծ և Փոքր Մասիայ գագաթներց վրայ տեղացի բնակիչներն ոչ թէ երկրաւոր, այլ երկնաւոր զօրութիւններ կը բնակեցնեն. Մեծն Արարատ 16919 ոտք (անգղիական) ծովուն երեսէն բարձր լինելով, և 3000 ոտք աւելի վեր քան զըջուկայ բարձունքը, չէ թէ միայն մերձակայ տեղեաց վրայ կը տիրէ, այլ բոլոր բովանդակ ամենայն բարձանց վրայ, ընդ Հիւսիս և ընդ հարաւ և ընդ ամենայն կողմն երկրին: Արարատ կ'երևայ երկնաբերձ գագաթով ոչ թէ միայն Կէօք—չայի զառիվայրէն, այլ և զեռ շատ հեռուէն, յափանց Սև ծովու մինչև ցճովիտս Եփրատայ և Տիգրիսի: Այս սրտաճառաւ յայտնի է նորա դերը, ինչպէս սրբազան լերին՝ առ ամենայն պատմական աղբն արեւմտեան Ասիոյ, ՍՋ աւելի սրարգ

և յայտնի կ'երևայ Արարատ Երասխայ հովտին ձախ կողմէն: Ասիոյ այլ լեւանց գօտիներուն նման չունի Արարատ Երասխայ կողմէն նախալեւներ, և այն պատճառաւ այս կողմէն իւր մեծավայելուչ ձիւով կ'երևայ: Իւր մեծատարր և լայնանիստ բունովն քանի մը հազար ոտք բարձրանալէն վերջ, երկու մասն կը բաժնուի, որոյ բարձրագոյնը մշտնջենաւոր ձիւնով թաղուած է, մինչդեռ՝ ցած մասն իւր ձիւնեղէն ծածկոյթը կ'ընկերականայ ամառան և զանազան թիչ ժամանակի համար:

« Տիպոյի բնակիչք Մեծ Մասիքը կը նմանցընեն սպարապետ զօրավարի, իսկ Փոքրն՝ նորա համալարգին. զի սա թէպէտ ժամանակաւոր, այլ սակայն կ'առնու վար զլիւարիւր իւր հրամանատարին առջև 1 »:

Սուխոյ—Ֆոնտանի (ցամաք աղբիւր) հանգուցին քովնոր տեսակ նախաճաշիկի հանգիւցեցայ վայրինի վրանաքնակներու, զորս Ռուս քաղաքի կրթութիւնը փոխած է ի կառավար և ի ձիւաւոր պահնակ տեղոյն: Այս վայրինիները կը շարունակ մէջտեղ ցրուած ցրունի հասկերուն չորս կողմն. տեղույս ցորենահատներն աւելի կ'ընտանեն, և ինչպէս համով նոյն և յարգով կը տարբերին Ռուսաստանի ցորենէն:

Այս և այն կողմէն կրակ տուին ցրուած յարգին. յարգը ձգտին մինչև ծայրը այրելով, հասկերը սեցան մնացին: Վայրենիները այդ աճիւնացեալ հասկերը ափերուն մէջ առնելով և չիկելով՝ կը փչէին ցորենին, որ մնացեալ չիւղերը ցրուին օդուն մէջ, (նոր տեսակ կալ), ցորենահատները բերանին կը ձգէին և ախորժանօք կը ծամէին այդ առձեռնսրտաստ կերակուրը: Մօտեցայ քովերին և նստայ. սոցա ափերը աղօթիքի երկաններու նման կարծրալիւղ էին: Լայնագամակ ծեր մի ինձ դարձնելով իւր երկանաձև ափերը, որոյ ծուռ մատերը չորցած կողմափայտի կը նմանէին, — ինչպէս, ասաց, լաւ նախաճաշիկ չէ:

— Պէտք է լաւ լինի, ասացի, զի կ'ուտէք բարի ախորժակ:

Սկսեց լի բարենարտութեամբ դարձան ինձ. բերանին լեցուն էր խարկած ցորենով, զորս շանց պէս ճերմակ ակռանելով կը ծամէին:

1 Օրադրութիւն հնագիտական վաստակոց ի Կովկաս. 1879, էջ 171—172:

Ծերը իւր երկանտձև ափէն իմ չորցած ափիս մէջ սլարպելով մասն մի խարկած ցորենահատ, — Առ կեր, սասաց, տէր:

— Փորձեցի, յիսուի համիղ էր:

Ետքէն տուաւ, աւելցնելով: — Շնորհա-կալ ենք, որ մեզի հետ կը ճաշես:

— Շնորհ ունիմ, ասացի:

— Ղիտենս, ասաց, ի՛նչպէս ծեր եմ ես:

— Սակայն քաջ կ'երկուսաս:

— Այո տէր, քաջ եմ. եղած եմ ՚ի Մոս-կուա, Խաղան, Իրքութեւք, Քուգուր, ընդ համօրէն Սիրերիս:

— Ի՛նչպէս, ի՛նչ կերպով:

— Պարոն մի զիս հետը տարաւ. ես շատ տարիք ունիմ:

— Քանի տարեկան ես:

— Քառասուն. երբ փառքեիչ առաւ Երեան, այն ատեն ես երկու տասը տարեկան էի:

— Քա՛մն ուրեմն:

— Ոչ. տա՛նն ե երկու:

— Տասնուերկու:

— Այո, տասնուերկու:

— Չէ քառասուն ուրեմն, այլ վաթսու-նը անցուցած ես:

— Այո, անցուցած եմ. ես ծեր եմ:

Սիրով երկնցան դէպ ինձի և այլ կորա-ցեալ ափեր, մաքրուած ցորենահատե-րով: Չհրաժարեցայ, որպէս զի արեւելեան հիւրամեծարութեան նախատինք չբերեմ: սկսայ և ես ընդ ափ փշրել խարկած հաս-կերը՝ ճիշդ Առաքելոց նման. միտքս եկաւ Աւետարանի մէջ գրուածը, թէ ինչպէս անգամ մի Առաքեալք արտորայից մէջէն անցնելով, կը կորզէին հասկերը և ընդ ափ փշրելով կ'ուտէին, այս վայրենեաց նման: « Եւ եղև ՚ի շաբաթու յիւրկորդում առա-ջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն, և աշակերտքն նորա կորզէին հասկ, փշրէին ընդ ափ և ուտէին... (Ղուկ. Զ. 1-5):

Այն այս վայրենիք ալ մեծ սոճի օր էր որ զայս կ'առնէին: Այլսկերպութեան տօ-նին, օգոստոս 6 ին, յորում՝ առաջին ան-գամ տեսայ զԱրարատ:

Աւելորդապաշտական երկիւղ մի սպըր-դեցաւ ՚ի հոգիս. ըստ աւանդութեան, ՚ի 6 օգոստոսի Քրիստոս ելաւ լեռը և այլակեր-պեցաւ. ի՛նչ կը սպասէ ինձ այդ լեռան վրայ, որուն կը մերձենամ:

Այս վայրկենէն սկսեալ Արարատ դուրս չեկաւ այն մեծավայելուչ պատկերին շրթ-շանակէն՝ որ իմ առաջն տարածուած էր:

Կը շարունակուի:

ՎԱՍՆ ԼՈՒՍՆԻ ԵՒ ԱՍՏԵՂԱՅ

Ջւղոյն էաւ Արարին, զոր արար յառաջին աւ-տուրն, և արար աման օգեղէն արեգակնաւ. և յատակ լոյսն և զբերձութիւն էարկ յարեգակն, և զայլ ազօտն և զէրկագոյնն յամանն լուսնին, և զմրատեօական՝ յատեղացն: Զի որպէս լու-սինն շիկագոյն և գէշ թուլացուցանէ և փափ-կացուցանէ, և ոսկուն առնէ զրոյսս և զտունկս: Ոմանք ասեն թէ լուսին զլոյսն յարեգակնէ առնու, այլք չհաւատան: Այլ որպէս յարար-չութեանն որիւք կազմեցաւ լուսնին ամանն և ար-կաւ ՚ի նմա լոյսն, նոյնպէս կայ և մնայ: Քանզի փորձովոց է լուսին իբրեւ զաման երկբերանի. յորժամ պակասիլ սկսանի՝ ընդ մի գունն ելանէ

և զթիկակմբն պատի, և գայ մինչև ամենևին պա-կասի և սպառի ՚ի ներքոյ դեհացն, և մինչ ՚ի վե-րին կողմն հասեալ լինի՝ մինչ ՚ի միւսս գունն ընդ որ ՚ի ներքս մտեալ գայ դարձեալ մեղմով և ընու-զփորաձէջ՝ ՚ի լրմանէն, և դարձեալ ելանէ ՚ի պակասեալն: Արեգակն զինչ սայլի ակն երթայ, զոր ասեն այլք իբրեւ զՐախազաց և իբրեւ զա-զօրիս. իսկ լուսին ՚ի թուիչ երթայ յառաջ սո-ղալով, և աստեղքն ոստոստեալ՝ արեգակն՝ յուսոյ ակն կամ մեծակն թարգմանի, և լուսնին՝ եթէ յոյս ունի:

ՈՍԿԵՓՈՐԻՉ